AZG NEW PDF.qxd 17/06/2010 21:19 Page 1

Ազգ
Azg
18 ՅՈՒՆԻՍ 2010 ՈՒՐԲԱԹ 112 (4492)
ISSN: 1829-1651

# Հիլարի Քլինթոնի հարավկովկասյան հուլիսյան տուրնեն. ի՞նչ կնշանակի

ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հաջորդ ամսվա սկզբներին ծրագրում է այցելել Հայաստան, եւ ոչ միայն: Այդ մասին Washington Post-ին ասել է Լատվիայի վարչապետ Վալդիս Դոմբրովսկիսը: Իր իսկ խոսքերով, այդ մասին Լատվիայի վարչապետը տեղեկացել է Քլինթոնի հետ նախօրեին կայացած հանդիպման ժամանակ:

Բացի այդ, ըստ ամերիկյան պարբերականի զրուցակցի, Քլինթոնը ծրագրում է լինել նաեւ Վրաստանում, Ադրբեջանում ու Ուկրաինայում:

«**Ազգը**» նախորդ համարում անդրադարձել էր այն լուրերին, թե Քլինթոնը պատրաստվում է այցելել Ադրբեջան, սակայն այդ լուրը հաստատում չէր գտնում: Եվ հետաքրքրական է, որ ԱՄՆ պետքարտուղարի այցելությունների մասին տեղեկացնում է Լատվիայի վարչապետը, այլ ոչ ԱՄՆ պաշտոնական աղբյուրը: Ամեն դեպքում, ոչ այնքան հասկանալի վիճակի անհասկանալիությունը ավելանում է նաեւ նրանով, որ որեւէ բան հայտնի չէ ԱՄՆ պետքարտուղարի այցելության օրակարգից ու ընդհանրապես այդ երկրների ընտրության պատճառներից:

Ա. Հ.

# «Մայիսն անբնական տաք էր Պետերբուրգում, իսկ ձմեռը՝ բավական խիստ»



Ինչպես երեկ տեղեկացրեց «Ազգը»՝ հունիսի 17-19 նախագահ Սերժ Սարգսյանը աշխատանքային այցով կգտնվի Սանկտ Պետերբուրգում: Ռուսաստանի «հյուսիսային մայրաքաղաքում» ամենամյա միջազգային տնտեսական համաժողովին մասնակցելու մեկնած Հայաստանի պատվիրակության կազմում են նաեւ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը եւ այլք: Երեւանի ժամանակով ժամը 19-ին Սանկտ Պետերբուրգի մերձակայքում գտնվող Կոնստանտինյան պալատում նախատեսված էր Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ եռակողմ հանդիպումը, սակայն այն հետաձգվեց 20 րոպեով: Նախագահների հանդիպմանը հատկացվել էր ընդամենը 30 րոպե, ինչը, փաստորեն, նախօրոք հստակեցնում էր, որ այս հանդիպման հետ էական հույսեր կապելը սխալ է. 30 րոպեում, բնականաբար, նախագահներին չէր հաջողվի լուրջ քննարկումներ ծավալել, մանավանդ՝ լուծումների ճանապարհներ գտնել: Չնայած հանդիպումը նախատեսվածից բավական երկար տեւեց, դրանց ընթացքը ապացուցում է հանդիպումից որեւէ լուրջ սպասելիք չունենալու կանխատեսումների արդարացիությունը: Այսպես, ըստ News.am-ի, նախագահ Մեդվեդեւը սկզբում հետաքրքրվել է Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի որպիսությամբ, ինչին Հայաստանի նախագահը պատասխանել է. «Անձամբ ինձ ամեն ինչ դուր է գալիս»: Այնուհետեւ Մեդվեդեւը խոսել է պետերբուրգյան այս տարվա «անբնական տաք մայիսից եւ խիստ ձմեռից», որից հետո լրագրողներին խնդրել են հեռանալ բանակցությունների սենյակից: Հանդիպումից հետո Մեդվեդեւի անունից մատուցվել է աշխատանքային ճաշ, նախագահներն այցելել են նաեւ պալատի մառան: Երեկ երեկոյան դեռեւս չկար որեւէ հստակեցում՝ կկայանա՞ արդյոք Սարգսյան-Ալիեւ դեմ առ դեմ հանդիպումը: Նախագահների եռակողմ հանդիպմանն ավելի մանրամասն «Ազգը» կանդրադառնա վաղվա համարում, ամենայն հավանականությամբ հենց վաղն էլ կլինեն որոշ հայտարարություններ:

Հ. Ա.

ՕՐԱԽՆԴԻՐ

# Օտարալեզու դպրոցների փաթեթի հետ կապված ոչինչ չի՞ բացառվում

Եկող երեքշաբթի հավանաբար կհրավիրվի Ազգային ժողովի արտահերթ նիստ, ուր կշարունակվի օտարալեզու դպրոցներ բացելու օրենսդրական փաթեթի քննարկումն առաջին ընթերցմամբ: Քննարկումն սկսվել էր ԱԺ գարնանային նստաշրջանի վերջին քառօրյայում եւ զուգահեռվել օտարալեզու դպրոցների բացման դեմ հասարակության տարբեր շերտերի բողոքի գործողություններով: Մեր տեղեկություններով՝ անցած շաբաթավերջին նախագահ Սարգսյանն օտարալեզու դպրոցների խնդիրը քննարկել է ՀՀԿ խորհրդի նիստում, իսկ ավելի ստույգ՝ լսել է խորհրդի անդամների տեսակետներն օրենսդրական փաթեթի եւ հասարակությունում առկա մտահոգությունների վերաբերյալ: Ըստ տեղեկությունների՝ ՀՀԿ խորհրդի անդամները նախագահին ներկայացրել են, թե արդեն լրացված եւ նոր փոփոխություններով առաջին ընթերցման ներկայացված փաթեթում տրված են բոլոր մտահոգիչ պահերի օրենսդրական լուծումները: Նախագահն այս տեսակետները լսել է, իսկ թե ի՞նչ եզրահանգման է եկել՝ արդեն հայտնի կդառնա նախագծի քննարկման ժամանակ ՀՀԿ-ականների պահվածքից:

Երեկ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանից հետաքրքրվեցինք՝ արդյոք հնարավո՞ր է, որ կառավարությունը, նկատի ունենալով հասարակական բացասական արձագանքը, հետ վերցնի փաթեթը: Ա. Դավթյանն այդպիսի տեղեկություններ չուներ, մանավանդ արտահերթ նիստը քթի տակ է: Չնայած մեր առավել ճշտող հարցերին ի պատասխան՝ այնուամենայնիվ ավելացրեց, որ ոչինչ բացառել հնարավոր չէ, եւ կյանքն անշարժ մի բան չէ: Իսկ փաթեթի վերաբերյալ խորհրդարանական լսումները հենց հանձնաժողովի որոշմամբ առաջինից երկրորդ ընթերցման ժամանակ են տեղի ունենալու: Իսկ ըստ նույն հանձնաժողովի անդամ, ՀՀԿ-ական Արտակ Զաքարյանի՝ մտահոգությունների լուծման ուղիները փաթեթում ուրվագծված, ասել է թե՝ փարատված են: Օրինագիծը հետ վերցնելը նա անտրամաբանական է համարում, քանի որ գտնում է՝ գաղափարն ինքնին լավն է, իրականացման ճիշտ տարբերակը պետք է գտնվի ուղղակի:

Ս. Խ.

# Իսրայելի՝ Անկարային ուղղված փոքրիկ ընդառաջ քայլը

«Ազգը» հունիսի 8-ի համարում տեղեկացրել էր, որ ի պատասխան Թուրքիայի մեղադրանքների, իսրայելցի մի խումբ ուսանողներ պատրաստվում են նավով օգնություն տանել Թուրքիա՝ տեղի հայերին ու քրդերին: Ավելին՝ հրեա ուսանողները նշել էին, որ Թուրքիան շարունակում է ժխտել Հայոց ցեղասպանության փաստը, եւ իրենք պատրաստվում են բարձրաձայնել այն Ստամբուլում եւ Անկարայում: Սակայն, ըստ «Պանորամա.ամ» կայքի, որն էլ իր հերթին հղում է անում թուրքական «Զաման»-ին, իսրայելական կառավարության միջամտությունից հետո այս նախաձեռնությունը տապալվել է: Իբրեւ պատճառաբանություն նշվում է. «Երբ ամբողջ աշխարհի ուշադրության կենտրոնում են Մեքսիկական ծոցի նավթային ճգնաժամն ու ֆուտբոլի աշխարհի առաջնությունը, այդ տեսակ նախաձեռնությունները վնասակար կլինեն Իսրայելի համար ու կհիշեցնեն երկու շաբաթ առաջ տեղի ունեցած հարձակումը թուրքական նավի վրա»:

Ինչ խոսք, Մեքսիկական ծոցի նավթային ճգնաժամն ու ֆուտբոլի աշխարհի առաջնությունը չեն կարող արգելել իսրայելցիներին մեկ անգամ եւս «հիշեցնել» իրենց մասին. հետեւաբար այս քայլը միայն ուղղված է գոնե ինչ-որ չափով թոթափելու թուրք-իսրայելական լարվածությունը, որից, անշուշտ, տուժում են երկու կողմերն էլ:

Հ. Ա.

# Մոսկվան պատրաստ է թուրքերին վաճառել C-300 եւ C-400 հրթիռահամալիրներ

Ռուսաստանը պատրաստ է մասնակցել Թուրքիային C-300 եւ C-400 զենիթային հրթիռահամալիրների մատակարարման մրցույթին: Այս մասին հայտարարել է Рособоронэкспорт-ի ղեկավար Անատոլի Իսայկինը, որի խոսքերը մեջբերում է ՌԻԱ գործակալությունը:

Ըստ Իսայկինի, «թուրքական բանակը հեռահար զենիթային հրթիռահամալիրների ձեռքբերման մեծ պահանջարկ ունի»: Մրցույթին, բացի Ռուսաստանից, կմասնակցեն Արեւմուտքի երկրների առաջատար ֆիրմաներ:

Վերջին երկու տարիներին Թուրքիան հետաքրքրություն է հանդես բերում C-300-ի եւ C-400-ի նկատմամբ եւ հույս ունի այդ հրթիռահամալիրներով փակել երկրի հարավային սահմանները:

2009-ի սեպտեմբերին Թուրքիայի զինված ուժերի ներկայացուցիչը պատրաստակամություն էր հայտնել առնվազն 1 մլրդ դոլար ծախսել ՌԴ-ից, ԱՄՆ-ից կամ ՉԺՀ-ից զենիթային հրթիռահամալիրներ գնելու համար: Մասնավորապես մտադրություն կա գնելու առնվազն 4 «Պետրիոտ» համալիր:

2010-ի հունիսին ՌԴ ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության տնօրեն Միխայիլ Դմիտրիեւը հայտարարել էր, թե ՄԱԿ-ի հակաիրանական նոր պատժամիջոցները չեն խանգարի այդ երկրին C-300 համալիրներ մատակարարելուն:

# «Թագավորությանս կեսը կտամ»

Ամերիկացի մեծահարուստներ **Բիլ Գեյթսն** ու **Ուորեն Բաֆեթը**, որոնց կարողությունները գնահատվում են համապատասխանաբար՝ 53 եւ 47 միլիարդ դոլար, հանդես են եկել անսպասելի եւ ընդօրինակման արժանի նախաձեռնությամբ: Նրանք պատրաստակամություն են հայտնել իրենց կարողությունների կեսը տրամադրել բարեգործությանը: Ավելին՝ Գեյթսն ու Բաֆեթը, ամերիկյան հայտնի The Wall Street Journal-ի տեղեկացմամբ, նմանօրինակ գործելու կոչով դիմել են Forbes-ում ընդգրկված բոլոր ամերիկացի միլիարդատերերին: Ամերիկյան պարբերականը նշում է, որ եթե նախաձեռնությունը համապատասխան ընթացք ստանա, ապա կդառնա «պատմության մեջ ամենախոշոր բարեգործական ակցիան»: Երկու միլիարդատերերը նաեւ հաշվարկել են, որ եթե բոլոր ամերիկացի միլիարդատերերը միանան իրենց նախաձեռնությանը, ապա նվիրատվությունների չափը կհասնի 600 մլրդ դոլարի: Նշվում է, որ ամենեւին պարտադիր չէ նվիրատվությունն անել կենդանության օրոք, կարող է լինել նաեւ հետմահու: «Առկա ճգնաժամի ժամանակներում գերհարուստները պարտավոր են օգնել նրանց, որոնք հայտնվել են դժվարին իրավիճակում», նշել են Բիլ Գեյթսն ու Ուորեն Բաֆեթը:

Հավելենք նաեւ, որ «կարողության կեսի նվիրաբերման ավանդույթը սկիզբ են դրել Ռոքֆելլերը եւ Կարնեգին:

Հ. Ա.

# Իրանը սպառնալիք չէ տարածաշրջանի համար

*Սպառնալիքը տարածաշրջանում լարվածությունը հետեւողականորեն սրելու ամերիկյան քաղաքականությունն է*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հունիսի 9-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած որոշումն էլ ավելի խստացրեց Իրանի նկատմամբ միջուկային ծրագրի առնչությամբ կիրառվող պատժամիջոցները: Իսրայելի հետ առաջացած սուր հակասությունների ֆոնին Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներից Թուրքիան դեմ էր քվեարկել որոշմանը: Ռուսաստանը նախապես համաձայնել էր որոշմանը, Չինաստանը չէր համաձայնում, բայց համոզել էին, իսկ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման պատժամիջոցների խստացման փոխարեն նախընտրում էր միջուկային ծրագրի հարցը լուծել իրանական կողմի հետ բանակցությունների միջոցով, սակայն տեղի է տվել պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հորդորներին:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատժամիջոցների խստացման որոշումն ընդունվել է այն պատճառաբանությամբ, թե Իրանի միջուկային ծրագիրը նպատակամղված է ատոմային ռումբի ստեղծմանը: Պատժամիջոցները վերաբերում են Իրանի տնտեսության եւ ռազմարդյունաբերության ոլորտներին: Մասնավորապես, Թեհրանը զրկվում է արտերկրում միջուկային ճյուղի ձեռնարկություններին ֆինանսավորելու հնարավորությունից, ինչպես նաեւ արգելվում է տանկերի, զրահամեքենաների, ռազմական ինքնաթիռների, ուղղաթիռների, ռազմանավերի, հրթիռների եւ հրթիռակայանքների մատակարարումը Իրանին:

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը իսկույն արձագանքել եւ դատապարտել էր որոշումը՝ անվանելով դա աղբարկղ նետելու ենթակա անձեռոցիկ: Հարցը սակայն Անվտանգության խորհրդի որոշման դատապարտումը չէ, այլ տարածաշրջանում լարվածությունը հետեւողականորեն սրելու ամերիկյան միտումների պարբերաբար զարգացումն ու տարածաշրջանի քաղաքական կյանքում անկայունության վերածումը մշտական գործոնի:

Տես էջ 5

# Կոնվենցիան կա, բայց հաշմանդամներն իրական հնարավորություններ չունեն




Մայիսի 17-ին Ազգային ժողովը վավերացրեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան: Մեկ ամիս հետո՝ երեկ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի հանձնաժողովն ու եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը համատեղ լսումներ էին կազմակերպել մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի փորձագիտական խմբի պատրաստած՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավական եւ սոցիալական եւ սոցիալ-հոգեբանական կարգավիճակի վերաբերյալ հետազոտության շրջանակներում, փորձելով վեր հանել, թե որքանո՞վ է Հայաստանի ներպետական օրենսդրությունը ներդաշնակեցված միջազգային փաստաթղթերին եւ որքանո՞վ են Հայաստանի իրավասու մարմինները իրականացնում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները:

«Հաշմանդամությունը չպիտի դիտվի որպես դատավճիռ. ցավոք, այսօր դա այդպես է. մենք խնդիրներ ունենք լուծելու թե՛ ազգային օրենսդրության հարցում, թե՛ հասարակական ընկալումը փոխելու առումով», նկատեց եվրոինտեգրման հանձնաժողովի նախագահ **Նաիրա Զոհրաբյանը**: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ **Ռուստամ Մախմուդյանը** նշեց, որ իր աշխատանքային զեկույցը սկսել է ստեղծվել այն ժամանակ, երբ դեռ կոնվենցիան չէր ստեղծվել, այսինքն՝ հասկանալի պիտի լիներ, որ այն ամբողջությամբ չի կարող արտացոլել ներպետական օրենսդրության մեջ առկա թերություններն ու իրավակիրառական պրակտիկայի թերությունները, դա արվել էր միայն հնարավորինս՝ նշելով նաեւ, որ ՄԻՊ-ի բոլոր տարեկան զեկույցներում, որպես առանձին խոցելի խմբերի, անդրադարձ է կատարվել հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին:

Աշխատանքային զեկույցից պարզ դարձավ, որ մեր ներպետական օրենսդրությունն ուղղակիորեն չի արտացոլում «հաշմանդամ» եզրույթի լիարժեք բնորոշումը, ինչը բխում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներից՝ նախ ամբողջական տերմինի տեղ չգտնելու առումով, ավելի ուշ զեկուցողը կանգ առավ մյուս անհամապատասխանությունների վրա. նախ խնդիր է, որ Հայաստանում պետք է վերանան կարծրատիպերը հաշմանդամների նկատմամբ՝ իրավագիտակցության եւ վերաբերմունքի առումով, ապա սոցիալ հոգեբանական առանձնահատկությունները նկատի առնելով պետք է կառուցել պրակտիկան եւ օրենսդրական բարեփոխումը: Տեղեկատվության ազատության լիարժեք ապահովումն է խնդիր՝ խտրականության դրսեւորման ձեւ է չապահովումը, նշանային լեզվի կիրառումը ճանաչելն ու խթանելը նույնպես պարտադիր են՝ մեր հեռուստաալիքների մեծ մասը դրանից չի օգտվում, սա եւս պարտավորություն է պետության համար: Քրեական օրենսգրքում եւս բացեր կան, երեխայի իրավունքների առումով էլ կան օրենսդրական անկատարություններ, որոնք պետք է վերացվեն:

Բոլոր այդ խնդիրները լուծելու համար իրավական համապարփակ ակտ է պետք, հաշմանդամների իրավունքներին վերաբերող սոցիալական պաշտպանության մասին օրենքը լիարժեք չի կարողանում հաշմանդամների իրավունքների եւ ազատությունների իրացումը, մանավանդ՝ ՀՀ-ն արդեն միջազգային պարտավորություններ է ստանձնել միջազգային փաստաթուղթ վավերացնելով, ուրեմն եւ մեր օրենսդրությունը պետք է համապատասխանեցնել միջազգային կոնվենցիային: Մախմուդյանը նաեւ նշեց, որ հաշմանդամություն ունեցող անձանցից քչերն են դիմել հինչեւ հիմա ՄԻՊ-ին՝ հիմնականում դրանք վերաբերել են աշխատանքային պարտավորությունների կատարման ընթացքում խեղում ստացած մարդկանց սոցիալական աջակցության խնդիրներին եւ եւ հաշմանդամության կարգի տրման գործընթացին:

Երեկվա լսումներին մասնակցում էին հաշմանդամներ եւ ՀԿ ներկայացուցիչներ, պաշտոնյաներ, ԱԺ պատգամավորներ: Հաշմանդամները գոհ չմնացին զեկույցից՝ իրենց խնդիրներն այնտեղ լիարժեք չտեսան: Հայաստանում այսօր հաշվառված է 170 950 հաշմանդամ: Մինչեւ 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը 8 706 է:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Զեմմա Բաղդասարյանի ներկայացմամբ էլ փորձ է արվում կազմակերպել հաշմանդամների զբաղվածության հարցը: Դիտարկվում է նույնիսկ այնպիսի օրենսդրական նորմ, որ գործատուներին առաջարկվի հաշմանդամների համար սահմանել 5 տոկոսի չափով քվոտաներ, բայց նախ պետք է զբաղվածությանը վերաբերող օրենսդրությունը փոխելով հաշմանդամների աշխատանքի հնարավորությունն ապահովել:

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Արամ Սաֆարյանը** հույս հայտնեց, որ հաշմանդամների իրավունքների եւ սոցիալական ներառման մասին նոր օրենքի նախագծի քննարկումներին ակտիվ կմասնակցեն ՀԿ-ների ներկայացուցիչներ, ոլորտի փորձագետներ, ովքեր իրենց փորձագիտական աջակցությունը կբերեն նոր օրենքի ստեղծման հարցում:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

# Բիզնես սկսելը «մեկ պատուհանից» եւ 1 օրում

## *Ներկայիս 10-15 օրվա եւ երկու պետական մարմիններին դիմելու փոխարեն*

**Հայաստանում բիզնես սկսելու գործընթացի բավականին երկար տեւողության (10-15 օր), այն դյուրացնելու, փաստաթղթերի ներկայացումը եւ ձեռնարկության գրանցումը «մեկ պատուհանից» եւ մեկ օրում իրագործելու անհրաժեշտությանը մեր թերթում անդրադարձել ենք: Մասնավորապես, «Ձեռնարկությունների գրանցումը՝ տառապանքի ճանապարհ» («Ազգ», 23.10.2009) հրապարակմամբ ներկայացնելով ձեռնարկությունների գրանցման գործարարի անցած ճանապարհը, մատնանշել էինք այն հանգամանքը, որ դեռ անցյալ տարի այս խնդիրը կառավարության ծրագրերով պետք է լուծված լիներ եւ «մեկ պատուհանը» ներդրված, սակայն դա տեղի չի ունեցել եւ չի էլ նշվում, թե ե՞րբ տեղի կունենա: Այլ հրապարակումներում նույնպես նշել էինք, որ ձեռնարկության գրանցումը մեկ օրում իրականացնելու որոշումը կյանքի կոչելու մասին խոսել էին վարչապետ Տիգրան Սարգսյանն ու էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, բայց այդ քայլը մնացել էր անկատար:**

**Այդուհանդերձ, կառավարության վերջին նիստերից մեկում, ի վերջո, որոշում ընդունվեց բիզնես սկսելը մեկ օրում իրագործելու նպատակով օրենսդրական փոփոխություններ կատարել: Մինչ փոփոխությունների առաջարկը կքննարկվի եւ կընդունվի Ազգային ժողովում, այդ սպասված քայլի մանրամասների մասին տեղեկանալու նպատակով զրուցեցինք պետեկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ռուբիկ Քոչարյանի հետ:**

**Մեր զրուցակիցը հայտնեց, որ ենթադրվում է, որ խորհրդարանի հաստատումից հետո այս նոր կարգը 2011-ի հունվարի 1-ից գործածության մեջ կդրվի: Ի՞նչ է այն նախատեսում:**

**Փաստորեն, բիզնես սկսելու համար անձը երկու պետական կառույց այցելության եւ երկու փաթեթ փաստաթղթեր ներկայացնելու փոխարեն դա կկատարի միայն մեկ տեղ: Նախկինում փաստաթղթերի փաթեթը ներկայացնելով պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանում, երկրորդ փաթեթը պարտադիր կերպով ներկայացվում էր հարկային մարմին՝ հաշվառվելու եւ հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ ստանալու համար: Ըստ Ռուբիկ Քոչարյանի, այդ դժվարություններից խուսափելու համար, օրենքի փոփոխությունների ընդունումից հետո, որպես իրավաբանական անձ եւ անհատ ձեռնարկատեր գրանցվելու ցանկություն ունեցողները արդեն միանգամից ներկայանում են ռեգիստրի բաժանմունք եւ ներկայացնում օրենքով հաստատված փաստաթղթերի փաթեթը:**

**Այսինքն՝ հաճախորդը օգտվում է «մեկ պատուհան» համակարգից եւ այլեւս բիզնեսի գրանցման հետ կապված այլ խնդիրներ չի ունենում: Գրանցման գործընթացը պետք է տեղի ունենա մեկ օրվա ընթացքում, իսկ տեղեկությունները միմյանց միջեւ կփոխանակեն պետռեգիստրն ու հարկային մարմինը:**

**Մեր հարցին, թե ինչպե՞ս է տեղի ունենալու ձեռնարկության ֆիրմային անվանման հաստատումը, քանի որ դրա համար ներկա պահին երեք օր է սահմանված, որի ընթացքում պետռեգիստրի տարածքային ստորաբաժանումից դիմում են մտավոր սեփականության պահպանման գործակալություն, պետեկամուտների կոմիտեի փոխնախագահն ասաց. «Առավելագույնս ձգտելու ենք, որ ժամկետները հասցնենք նվազագույնի, իսկ տեղեկատվական բազաների միասնականացումը պարտադիր պահանջ է լինելու: Ենթադրվում է, որ կլինի միասնական բազա այս հարցում»:**

**Մեր զրուցակիցն ընդգծեց, որ սրանով լուծվում է երկու հարց, առաջինը՝ ժամանակի խնայողության եւ երկու տեղ փաստաթղթերը տանելու, երկրորդը՝ հաշվառման չկանգնելու համար պատժամիջոցների չենթարկվելու: Ներկայումս, գրանցվելուց հետո 1 ամսվա ընթացքում հարկային մարմին չներկայանալու դեպքում տվյալ ընկերության համար տուգանք է սահմանված: Իսկ նոր կարգով այս խնդիրն արդեն ինքնաբերաբար լուծված կլինի, քանի որ գրանցումն ու հարկային մարմնում հաշվառվելը կլինեն միաժամանակ: Ռուբիկ Քոչարյանի հավաստմամբ՝ գրանցման գործընթացը կլինի առ ցանց ռեժիմով:**

**Պետեկամուտների կոմիտեի փոխնախագահն ընդգծեց, որ նոր կարգը նախատեսված չէ բանկային եւ վարկային կազմակերպությունների համար, որոնք հատուկ գործընթացներ են անցնում: Նոր կարգով գրանցվողների ցանկից դուրս են մնացել նաեւ ֆիզիկական անձինք՝ նոտարական գրասենյակներ եւ այլն: Սակայն նա համոզմունք հայտնեց, որ գործընթացն առաջիկայում կխորանա, եւ նրանք նույնպես հնարավորություն կունենան լիազոր մարմնի կողմից գրանցվելու մեկ օրվա ընթացքում, եւ իրենց գրանցումը կկատարեն օգտվելով «մեկ պատուհանի» համակարգից:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հայրը մեղադրում է բուժանձնակազմին

**Հունիսի 13-ին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշ. կենտրոնում օձի խայթոցից իրենց մոտ ստացիոնար բուժման մեջ գտնվող 27-ամյա Արբակ Ներսիսյանը մահացել է:**

**Հունիսի 16-ին Ա. Ներսիսյանի հայրը Կոտայքի բաժնի ոստիկանություն հայտարարություն է տվել, ու նշել, որ Գառնի գյուղում գտնվող իրենց տան այգում խոտ հնձելու ժամանակ, գյուրզա օձը խայթել է որդուն, որից հետո նրան ամիջապես տեղափոխել են Գառնիի հիվանդանոց, որտեղ բուժանձնակազմը ոչ պատշաճ բուժօգնություն է ցուցաբերել, ունենալով օձի հակաթույնը՝ չեն ներարկել եւ ցուցաբերել են այլ տիպի բուժօգնություն, որից հետո տեղափոխել են Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշ. կենտրոն, որտեղ էլ որդին մահացել է:**

**Կատարվում է քննություն:**

# Ցավակցություն

«Ազգի» խմբագրակազմը խորապես ցավակցում է իր աշխատակիցներ Աշոտ եւ Աղավնի Հայրապետյաններին՝ իրենց հարազատի՝
**Շուշան Փխրիկյանի**
մահվան կապակցությամբ:

# «Սուրճ կխմե՞ն», թե՞ «կարեւոր էլեմենտ կմտցնեն»

**Հունիսի 17-19 նախագահ Սերժ Սարգսյանը ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրավերով աշխատանքային այցով կլինի Սանկտ Պետերբուրգում: Ինչպես նախորդ համարում տեղեկացրեց «Ազգը»՝ հիմնվելով նախագահի մամուլի գրասենյակի տարածած հայտարարության վրա, Սանկտ Պետերբուրգում նախատեսված է Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ եռակողմ հանդիպումը: Բնականաբար նախագահների քննարկման առարկա լինելու է առաջին հերթին ղարաբաղյան հակամարտությունը: Այս կապակցությամբ երեկ «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Բեքարյանը հրավիրած ասուլիսի ընթացքում կարծիք հայտնեց, որ նախ այս հանդիպման եռակողմ ձեւաչափը վկայում է, որ Թուրքիան անելիք չունի գործընթացում. «Բանակցային սեղանի շուրջը նստած չէ ԼՂՀ-ն, հետեւաբար ակնկալել ինչ-որ մեծ արդյունք՝ ուղղակի հնարավոր չէ: Մյուս կողմից էլ՝ հիշենք Մայնդորֆը, Սոչիի հանդիպումը, որից հետո տարածվեց հայտարարություն, թե հստակեցվել են մադրիդյան սկզբունքների նախաբանի ինչ-ինչ էլեմենտներ: Հետեւաբար այստեղ նույնպես հնարավոր է, որ նոր դետալ կամ էլեմենտ ավելանա», նշեց Բեքարյանը: Նույն առիթով Ռուսաստանի աշխարհաքաղաքական հիմնախնդիրների ակադեմիայի փոխնախագահ Արայիկ Սարգսյանը հայտարարել է, որ ինքն այդ հանդիպումից ոչինչ չի սպասում. «Լրիվ անկեղծ որ ասեմ՝ Պետերբուրգում նախագահները սուրճ կխմեն (այնտեղ բավական լավ սուրճ կա), գարեջուր կխմեն ու կվերադառնան: Բացարձակապես ոչինչ չի լինի», նշել է Սարգսյանը:**

**Ինչ վերաբերում է Թուրքիային ղարաբաղյան գործընթացից դուրս թողնելուն, ապա Սարգսյանը նկատել է, որ դա կատարվել է ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի շնորհիվ. «Չնայած նախագահ Մեդվեդեւն ամեն կերպ ցանկանում էր Թուրքիային ներգրավվել տարածաշրջանային գործընթացներում, այդ թվում՝ Ղարաբաղում, վարչապետ Պուտինը դա թույլ չտվեց՝ հասկանալով, որ Կովկասում ստատուս քվոյի փոփոխությունը կբերի ոչ միայն Ղարաբաղի կորստին՝ Հայաստանի համար, ոչ միայն Նախիջեւանի կորստին՝ Ադրբեջանի համար, այլ կհանգեցնի պատերազմական գործողությունների վերսկսմանը՝ Հարավային Կովկասում», նշել է Սարգսյանը, որի խոսքերով՝ այսօր գոյություն ունեն լուրջ տարաձայնություններ (ոչ միայն այս հարցում - Հ. Ա.) Մեդվեդեւի եւ Պուտինի միջեւ:**

**Ընդ որում, ըստ Սարգսյանի, հայկական քաղաքական դաշտում մի թեւն աշխատում է Մեդվեդեւի հետ, մյուսը՝ Պուտինի: Արայիկ Սարգսյանը, սակայն, որեւէ ապացույց չի տվել հատկապես Պուտին-Մեդվեդեւ «հակամարտության» վերաբերյալ, մինչդեռ ՌԴ նախագահն ու վարչապետը չեն հոգնում կրկնելուց, որ իրենց մեջ ամեն ինչ կարգին է, եւ իրենք աշխատում են փոխհամաձայնեցված:**

Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 17/06/2010 20:17 Page 1



# Անցուդարձ

## Հանդիպում Պերճ Զեյթունցյանի հետ

Համաշխարհային հայկական կոնգրեսի Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի (ՀՀԿ ԵԿԱ) նախաձեռնած ծրագրերից մեկի՝ «Հանդիպում անվանի մարդկանց հետ», շրջանակներում հունիսի 16-ին մի խումբ երիտասարդներ հանդիպեցին անվանի դրամատուրգ, մեծ հայրենասեր Պերճ Զեյթունցյանին: Հանդիպման դրդապատճառներից մեկն այն էր, որ այս օրերին Դրամատիկական թատրոնում բեմադրվում է Զեյթունցյանի «Հիսուս Նազովրեցին եւ նրա երկրորդ աշակերտը» պիեսը, որն օրեր առաջ ՀՀԿ ԵԿԱ նախաձեռնությամբ դիտել էին հանդիպման մասնակից երիտասարդները:





2009-ից ՀՀԿ ԵԿԱ-ն կազմակերպում է նման հանդիպումներ. առաջին հյուրը եղել է Լոռիս Ճգնավորյանը: Մեր մշակույթի մեծերի հետ հանդիպումները, անշուշտ, մեծ նշանակություն ունեն երիտասարդների համար. նրանք անձամբ են ծանոթանում, շփվում անվանի մարդկանց հետ. «Մեր նպատակը մեկն է՝ հնարավորություն ընձեռել երիտասարդներին անձամբ հանդիպելու կինոյի, արվեստի, մշակույթի գործիչներին: Այդ հանդիպումների ընթացքում երիտասարդները շատ բան սովորում են ու նաեւ սովորեցնում: Դեռեւս մեր կազմակերպած առաջին հանդիպումը՝ մաեստրո Ճգնավորյանի հետ, ցույց տվեց, որ ճիշտ բան ենք նախաձեռնել. հանդիպմանը ներկա կոնսերվատորիայի ուսանողները, որոնք այնքան էլ վստահ չէին, որ ճիշտ են ընտրել իրենց մասնագիտությունը, հանդիպման ընթացքում խոստովանեցին, որ իրենք սխալվել են», նշեց ՀՀԿ ԵԿԱ փոխնախագահ **Մարիամ Մարտիրոսյանը**:

Ծրագրի շրջանակներում երիտասարդներն արդեն հանդիպել են Ռոբերտ Ամիրխանյանին (որի հետ հանդիպումը վեր էր ածվել կենդանի համերգի - Հ. Ա.), Ջիվան Գասպարյանին, Արա Գեւորգյանին եւ շատ այլ անվանիների:

Պերճ Զեյթունցյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին ամենատարբեր հարցեր՝ գրողի առաջին գրքերից, երկրի սոցիալ-տնտեսական վիճակից մինչեւ բարոյական հարցեր՝ անկախություն, ազատություն եւ այլն: Անդրադառնալով իր հեղինակած «Հիսուս Նազովրեցին եւ նրա երկրորդ աշակերտը» պիեսին եւ հատկապես առավել աչքի ընկած Հուդայի կերպարին՝ դրամատուրգը նկատեց. «Ամեն մեկիս մեջ էլ Հուդա կա: Գրողի համար կարեւորն այն է, ինչը չկա Ավետարանում»:

«Ես ցնցված եմ Ձեր պիեսից: Մենք Հուդային միշտ իբրեւ դավաճանի էինք ընկալում, սակայն ներկայացումից հետո իմ աշխարհայացքը փոխվեց: Ինչպես Դուք եք ասում, Աստվածաշնչում գրված է 30 արծաթով մատնելու եւ ինքնասպան լինելու մասին, իսկ թե ի՞նչ է կատարվում դրանից հետո՝ բաց է. զարմանում եւ հիանում եմ՝ ինչպես կարելի էր նման լուծում գտնել», իր հիացմունքը հեղինակին հայտնեց հանդիպման մասնակիցներից **Ալինա Ռեւազյանը**:

Երիտասարդները հետաքրքրվեցին դրամատուրգից, թե ո՞րն է նրա դիրքորոշումը աղմկահարույց օտարալեզու դպրոցների բացման վերաբերյալ: «Կարեւորը դրվածքն է: Պետք չէ օտարալեզու դպրոցներ բացել, պետք է օտար լեզվի ուսուցումը բարձր մակարդակի վրա լինի: Երբ ես սովորում էի Եգիպտոսում, դպրոցում անցնում էինք ֆրանսերեն, ես լավ էի տիրապետում այդ լեզվին, սակայն դա չի նշանակում, որ մեր դպրոցը ֆրանսիական էր», ասաց Զեյթունցյանը:

Ի դեպ, խոսելով Եգիպտոսում անցկացրած իր դպրոցական տարիների մասին՝ դրամատուրգը նշեց, որ իր առաջին գրքերն այդ տարիներին է սկսել գրել. «Ժամանակին իմ գրքերի տպաքանակը հասնում էր 80 հազարի, այժմ 400 է, բայց սա իմ դեգրադացիան չէ, սա հասարակության դեգրադացիան է»:

Զեյթունցյանը նկատեց, որ այսօրվա երիտասարդության ամենամեծ ձեռքբերումը, ի տարբերություն իր սերնդակիցների, հենց շնորհված ազատությունն է. «Այսօրվա երիտասարդները շատ են սիրում ազատությունը, սակայն երբեք այն չպետք է խառնվի ամենաթողության հետ», նկատեց Զեյթունցյանը: Իսկ թե արդյոք անկախ մարդ համարո՞ւմ է իրեն դրամատուրգը՝ հարցին Զեյթունցյանը պատասխանեց. «35 հազար թոշակ եմ ստանում, ինչպե՞ս կարող եմ անկախ չլինել»: Անշուշտ, սոցիալական, նյութական հարցերն ամբողջովին ներթափանցել են, նույնիսկ շատ դեպքերում հիմնավորվել են մեր կյանքում, հենց այս խնդիրների լուծմանն է այսօր առաջնահերթություն տալիս մեր քաղաքացին՝ հաճախ ի հաշիվ բարոյականության ու հայրենասիրության:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

## Հայաստանը վերածվում է անապատի

Տեղակայված լինելով երաշտային տարածաշրջանում՝ Հայաստանը գտնվում է անապատացման զանազան երեւույթների ազդեցության տակ, որոնք բնության նախապայմանների, մարդկային գործոնի եւ տնտեսության մեջ անցումային ժամանակահատվածի պատճառով վերջին շրջանում բավական ուժեղ են դրսեւորվում: Հայաստանի տարածքների միայն 10 տոկոսն է պատված անտառներով: Մնացած հողերը օգտագործվում են գյուղատնտեսական, բնակելի եւ արդյունաբերական նպատակներով, ինչից հանրապետության տարածքի 80%-ն անապատացման զանազան ռիսկերի է ենթարկվում: Մտահոգությունը ՀՀ բնապահպանության նախարարության բիոռեսուրսների կառավարման վարչության պետի տեղակալ, ՄԱԿ-ի անապատացման եւ երաշտի դեմ պայքարի կոնվենցիայի համակարգող **Աշոտ Վարդեւանյանինն** է, տվյալները՝ նույնպես:

Հայաստանը կամաց-կամաց վերածվում է անապատի՝ անտառների անօրինական հատման, անասունների գերարածեցման եւ տնտեսության սխալ կազմակերպման հետեւանքով: Գյուղատնտեսության սխալ կազմակերպումը նույնպես լուրջ գործոն է: Հատկապես վնասակար է հողերը միեւնույն ցանքսային կուլտուրայի տակ օգտագործելը: «Հողային տարածքները քիչ են, եւ դրանց վրա անհնար է բազմաթիվ անգամ ցանք կազմակերպել: Այդ հողերը հաճախ ուղղակի սպառվում են: Գյուղատնտեսական նպատակներով նման հողերի օգտագործման ժամկետը, որը կարող էր 100-150 տարի հասնել, 10 անգամ կրճատվում է», ասաց Աշոտ Վարդեւանյանը:

Նրա մեկնաբանությամբ՝ անապատացման դեմ պայքարը զուտ բնապահպանական հարց չէ եւ ներառում է սոցիալական ու տնտեսական խնդիրներ: Վարդեւանյանը որեւէ տեղեկություն չհայտնեց Երեւանի կանաչապատման, կանաչ տարածքների պահպանման վերաբերյալ՝ նշելով, որ դրանով զբաղվում է քաղաքապետարանը: Ոչնչացված եւ տնկված անտառատարածքների ուսումնասիրությամբ զբաղվող անտառների մոնիտորինգի համակարգն էլ գործում էր գյուղնախարարության ենթակայությամբ, ու Վարդեւանյանն այդ կապակցությամբ էլ որեւէ կոնկրետ բան չասաց:

Վարդեւանյանի համոզմամբ՝ Հայաստանի անապատացման դեմ շատ բան է արվել: Հատուկ ֆոնդ է ստեղծվել, ուր ընդերքը շահագործողը պետք է գումար վճարի հետագայում շահագործված տարածքի վերականգնման համար: Թե որքան գումար է հավաքվել ֆոնդում եւ օգտագործվե՞լ է իր նշանակության համար հարցին էլ պատասխանեց. «Ես ֆինանսիստ չեմ»:

Փաստորեն ստացվում է մի իրավիճակ, երբ բնապահպանության նախարարությունը ահազանգում է երկրում բնապահպանական լուրջ իրավիճակի մասին, միաժամանակ ոչինչ չի ձեռնարկում եւ թույլատրում է, որ Հայաստանն անապատացվի: Նախարարության լուռ համաձայնության եւ գլխիկոր դիրքորոշման հետեւանքով այսօր Ուսանողական այգում ընթանում է շինարարություն, իսկ Խոսրովի անտառ պետական արգելոցում ստեղծել են «Գիլան» արգելավայր, այն հերթական խրախճանքի վայր դարձնելու համար:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## Ֆիզիկայի ինստիտուտի զարգացման համար

«Ա. Ի. Ալիխանյանի անվան Երեւանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ: Այս մասին կառավարության երեկ ընդունած որոշումը միայն այս գիտական հաստատության անվանափոխումը չէ: Կառավարությունը հավանություն տվեց վարչապետի 2009 թ. մայիսի 20-ի «Փորձագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» որոշմամբ ստեղծված միջազգային փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա մշակված ինստիտուտի զարգացման ուղղությունների վերաբերյալ զեկույցին, որը վերաբերում էր ինստիտուտի հեռանկարային զարգացման ուղղությունները որոշելուն, կառավարման բարեփոխումն իրականացնելու եւ գիտական հետազոտությունների արդյունավետությունը բարձրացնելուն:

Այս որոշման մասին որոշ մանրամասներ լրագրողներին հայտնեց ինստիտուտի տնօրեն **Աշոտ Չիլինգարյանը**: Նա այն կարծիքը հայտնեց, որ սա առաջին խոշոր քայլն է այս գիտական հիմնարկի զարգացման համար, քանի որ նախորդ 15 տարիների ընթացքում ներդրումներ չեն եղել, եւ ինստիտուտը շարունակել է գործել եւ զարգացում ունենալ դրամաշնորհների միջոցով: Տնօրենը տեղեկացրեց, որ ինստիտուտի բազայի բարելավման համար՝ նորոգում, աշխատավարձերի բարձրացում եւ այլն, կտրամադրվի 570 մլն դրամ, իսկ հետագա ծրագրերն արդեն միլիոնավոր դոլարների արժողությամբ են: Մասնավորապես, նախատեսվում է զարգացնել նոր գիտական ուղղություններ՝ միջուկային ֆիզիկան եւ միջուկային բժշկությունը, ստեղծել գիտական կենտրոններ եւ ուսումնական լաբորատորիաներ: Ինչ վերաբերում է նոր արագացուցիչին, ապա այդ ծրագիրն իրականացնելու համար 50-60 մլն դոլար անհրաժեշտ կլինի, իսկ միջուկային բժշկության կենտրոնի ստեղծումը, Աշոտ Չիլինգարյանի գնահատմամբ, կարժենա մոտ 100 մլն դոլար եւ կպահանջի 6-7 տարի: Սակայն դա կլինի միանգամայն նոր, բարձրակարգ մակարդակի առողջապահական ծառայություն:

Ա. Ս.

## Ոռոգման ջրի վարձավճարի 50 տոկոս զեղչ մեղրեցիներին

Կառավարության որոշմամբ պահուստային ֆոնդից 227 մլն դրամ է հատկացվել տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետկոմին, այդ թվում՝ Մեղրու տարածաշրջանում օգտագործվող ոռոգման ջրի դիմաց գանձվող վարձավճարի 50 տոկոս զեղչ կիրառելու նպատակով: Բացի այդ, Մեղրու տարածաշրջանի գյուղատնտեսությունը զարգացնելու եւ բնակչության կողմից անհատական ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքը փոխհատուցելու համար Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 4 մլն 740 հազար դրամ:

Ա. Ս.

## Տեղեկություն չտրամադրելու համար պաշտոնյաները հայտնվել են դատարանում

Եթե հինգ օրվա ընթացքում լրագրողի հարցերին պաշտոնյան հրաժարվում է պատասխանել, լրագրողն իրավունք ունի դիմելու դատարան եւ պաշտոնյային ենթարկելու պատասխանատվության:

Վերջին երեք տարվա ընթացքում տեղեկություն չտրամադրելու համար դատարանի առաջ պատասխանատվության ենթարկվածները 20-ն է: Գյուղապետներ, մարզպետներ, քաղաքապետներ եւ կուսակցությունների ներկայացուցիչներ, որոնք հրաժարվել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի աշխատակիցներին ու անհատ լրագրողների տրամադրել կառույցի բյուջեի հետ կապված փաստաթղթեր: «Օրինաց երկիր» ՀԱԿ-ն ու ՀԱՍԿ-ը հրաժարվեցին տրամադրել ֆինանսական փաստաթղթեր ու նվիրատուների ցանկը: Նրանք հայտնվեցին դատարանում, եւ դատը շահեցինք», «Հայելի» ակումբում ասաց ԻԱԿ տնօրեն **Շուշան Դոյդոյանը**:

Իրավաբան **Կարեն Մեժլումյանի** մատուցմամբ՝ մարզերում ընթացող դատավարությունների ժամանակ դատավորները կաշկանդված են: Եղել են դեպքեր, երբ դատավորի վճռից մեկ օր առաջ պատասխանող կողմը տրամադրել է տեղեկությունը, պատասխանատվության չի ենթարկվել, սակայն ինֆորմացիան էլ ուշացած է եղել: Նրա մեկնաբանությամբ՝ պետք է կիրառել վարչական պատասխանատվության մեխանիզմը: «Պետք է պաշտոնյայի գրպանին հարվածել, որ հաջորդ անգամ նա լրագրողին տեղեկություն տրամադրի»:




20 դատական գործերից միայն մի դեպքում է դատարանը կիրառել վարչական պատասխանատվություն: Ելփինի գյուղապետը հրաժարվեց լրագրողին տրամադրել գյուղի բյուջեի վերաբերյալ տեղեկություն եւ տուգանվեց 50.000 դրամով:

Շուշան Դոյդոյանը նկատում է, որ նմանատիպ դատական գործերը պետք է օրինակ ծառայեն, որպեսզի պաշտոնյան չչարաշահի իր դիրքերն ու տեղեկություն տա, լրագրողն էլ պաշտպանի իր իրավունքները: Հ. Հ.

## Ցավակցություն

Հայաստանի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչությունը խորապես սգում է անվանի գեղանկարիչ, «Վահան Թեքեյան» միջազգային մրցանակաբաշխության դափնեկիր

**Վարուժան Վարդանյանի**

մահվան տխուր առիթով:

# Դավթյան-Մարիամյան կրթական հաստատությունն ավելացնում է հայկական դասարանների թիվը

## *Հայ ծնողները մտածում են, թե տանը հայերեն խոսելը բավական է լեզուն փրկելու համար*

Հարավային Կալիֆոռնիայի անգլիալեզու դպրոցներում ուսանում են 70-75 հազար հայ երեխաներ: Ողջ Կալիֆոռնիայում ընդամենը 15-18 հայկական դպրոցներ կան, իսկ Գլենդեյլում, որ Ամերիկայի ամենահայաշատ քաղաքն է, գործում են միայն չորսը: Ամերիկյան անգլիալեզու դպրոցներում Դավթյան-Մարիամյան կրթական հաստատությունը շաբաթական չորս օր, օրը` երկու դասաժամով, կազմակերպում է հայոց լեզվի, պատմության, հայ երգի ու պարի արտաժամյա (after-school) դասընթացներ: Այդպիսի դպրոցների թիվն այսօր հասնում է երեսուներեքի: Այդ դասընթացներին մասնակցում է հազար հայ աշակերտ: Մնացած 15-18 հայկական դպրոցներ հաճախող երեխաների թիվն ընդհանուր առմամբ ընդամենը հինգ-վեց հազարի է հասնում:

Հայերենը կարծես երկրորդական տեղ է գրավում Ամերիկայում ապրող հայ երեխայի համար: Նույնիսկ հայկական դպրոցներում դասից դուրս աշակերտները անգլերեն են խոսում: Հայերենը փախչում է նաեւ անգլերենով խաղացող հայ մանուկի ոտքերի տակից:

«Փորձում ենք հասկանալ, թե ինչու այդ 70-75 հազար աշակերտները չեն գնում մի տեղ, որ հայերեն սովորեն: Նրանց ծնողների մտքում ինչ կա, որ խանդավառված չեն այդ գաղափարով: Ինձ թվում է, որ դրամը մեծ դեր է խաղում, բայց նաեւ ծնողներ կան, որ կարող են ամիսը 500 դոլար պարի կամ կարատեի դասարանների համար վճարել, իսկ երբ հերթը հասնում է հայերենին, մտածում են, որ, լավ` իրենք տան մեջ արդեն խոսում են հայերեն: Ուրեմն, երեխան պետք չունի գրել-կարդալ սովորելու», ասում է Դավթյան-Մարիամյան կրթական հաստատության նախագահ **Վահիկ Ծատուրյանը**:

Ամերիկյան կրթական համակարգը համակած ճգնաժամը թափանցել է նաեւ հայ կրթական խնդիրների մեջ: Հայ ընտանիքների մեծամասնությունը խուսափում է երեխաներին ուղարկել հայկական մասնավոր դպրոցներ, ուր ամսավճարը սկսվում է 500-600 դոլարից: Իսկ Դավթյան-Մարիամյանում ամեն աշակերտի տարեկան վճարը 5 հարյուրի էլ չի հասնում: Բայց շատ ծնողներ դժվարանում են վճարել անգամ ամսական քառասունյոթ դոլարը:

Անկախ այս իրողությունից, հաստատությունը շարունակում է հայերենը ամերիկյան դպրոցներ ներարկելու քաղաքականությունը: Հոկտեմբերից հայերեն դասարաններ բացվեցին Porter Ranch-ում, Van Nuys քաղաքում, իսկ հունվարից` նույնիսկ La Canada-ի մի մասնավոր ամերիկյան դպրոցում: Արդեն երկու դպրոցում այս տարի ունենք նաեւ արեւմտահայերենով դասընթացներ: Եվ չնայած երեք նոր դպրոցներ են բացվել, աշակերտության թիվը մնացել է նույնը: Դա նշանակում է, որ աշակերտներ կան, որ չեն արձանագրվել այս դասընթացների համար: Եվ դա այն պարագայում, որ հաստատության վարչության որոշմամբ որեւէ թոշակ չվճարող աշակերտ դուրս չի մնացել իր դասարանից:

Գլենդեյլի աշակերտության մեկ երրորդը` 9 հազար 7-8 հարյուր երեխա, հայ է: Մի քանի տարի առաջ Դավթյան-Մարիամյանի ղեկավարությունը դիմեց Գլենդեյլի միացյալ համադպրոցական կառույցին (unified school district) առաջարկով, որ այսքան մեծաթիվ հայ աշակերտների պարագայում գուցե ճիշտ կլիներ հայոց լեզուն ամենօրյա դասերի մաս դարձնել: Unified school district-ի հանձնաժողովի որոշմամբ Թոմաս Ջեֆերսոնի անվան դպրոցում հայկական դասարաններ ստեղծվեցին: Այս տարի այդ դպրոցում արդեն հայերենի չորրորդ դասարանն է ավելանում: Վահիկ Ծատուրյանը պնդում է կարեւոր մի հանգամանք` «եթե հայ ծնողներն ավելի ակտիվ լինեն, արդյունքն ավելի լավ կլինի: Ծնողները պիտի գնան, պահանջեն, որ իրենք էլ են ուզում, որ իրենց երեխաները հայերեն սովորեն, արձանագրվեն waiting list-երի մեջ, որ ի վերջո շրջանի վարչակազմը համոզվի, որ մեկ դպրոցը բավարար չէ, եւ փորձի երկրորդ դպրոցում բացել նոր դասարաններ»:

Աշակերտական վճարումներով գոյացող ֆինանսական բյուջեի մոտ 70 տոկոսը 55-60 հոգանոց ուսուցչական կազմի աշխատավարձերի վրա է գնում: Նվիրյալների այս մեծ բանակն աշխատում է չնչին վճարներով: Հաստատության մնացած ծախսերը նվիրատվություններով, տարազահանդեսներով ու վիճակախաղով, բարեգործական միջոցառումներով են փորձում լուծել: Ամսեամիս են կազմակերպվում ֆինանսական միջոցները: Անցած տարի ՀՀ սփյուռքի նախարարությունն էլ հինգ հազար դոլարի նվիրատվություն արեց, այս տարի համատեղ աշխատելու ծրագրեր ունենք նրա հետ:

Այս տարվա մայիսի 23-ի հեռուստատեսային հանգանակության ժամանակ հաջողվեց հավաքել 75-80 հազար դոլար: Ըստ Ծատուրյանի, հանգանակության հիմնական գործող անձը դարձավ ժողովուրդը: Հեռուստաստուդիա էին գալիս տարեց տատիկներն ու պապիկները, եւ իբրեւ հոգու պարտք, բացում դրամապանակները: Հուզիչ տեսարաններ էին:

Ձուլման ամենավտանգավոր տարբերակը, թերեւս, խաղաղ համակերպումն է: Երբ հարմարվում ես իրավիճակին ու տրվում ինքնախաբեության, թե միայն տանը հայերեն հաղորդակցվելով լեզուն կպահես:

Դավթյան-Մարիամյանը կրթական հաստատությունը սուղ հնարավորություններով փորձում է ձուլման մեծ հոսանքի դեմն առնել: Նա հաղթահարելու տասնյակ խնդիրներ ունի` դասագրքերի հրատարակում, որոնք հենց այստեղ են պատրաստվելու ու այստեղի առանձնահատկությունները նկատի առնելով, ուսուցիչների համար աշխատանքային գրավիչ պայմանների ստեղծում, նվազագույն կրթավճարներով հայերենի նոր դասարանների ավելացում, քարոզչական աշխատանք ծնողների շրջանում, որպեսզի նրանք, ի վերջո, դուրս գան խաղաղ թմբիրից: Նոր ուսուցչական կադրերի ստեղծման խնդիր էլ կա, քանի որ ներկա կազմն արդեն միջին տարիքի սահմանն անցնում է:

Ասենք, որ ոչ միայն Դավթյան-Մարիամյան կրթական հաստատությունը, այլեւ հայկական դպրոցների մեծամասնությունը ԱՄՆ-ում ֆինանսական եւ այլ կարգի դժվարությունների շրջան է ապրում:

Եվ անկասկած, առաջինը կրթական կառույցների ամրացման մասին պիտի մտածել, եւ դեպի այս հայապահպան առաքելությունն ուղղորդել սփյուռքի եւ հայաստանյան բարեգործական ուժերը, գործարարների ու կազմակերպությունների նվիրատու ջանքերը:

Հաստատության նախագահի համոզմամբ, սակայն. «Այս կարգի խնդիրները հեղափոխական մոտեցումով պետք է լուծվեն: Գրագրություններով, արձանագրություններով, մեկը մյուսին նամակ գրելով ոչինչ չի ստացվի»:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# «Մեր գաղթը»` Վանից դեպի Իգդիր ու Երեւան

**«Գնում էինք ախուվախով, լացուկոծով` ամեն րոպե սպասելով թշնամու հարձակմանը: Հոգնածությունից եւ սովածությունից շատերը չէին կարողանում շարունակել ճանապարհը: Կային մարդիկ, որոնք, չկարողանալով շալակած տանել իրենց երեխաներին, թողնում էին նրանց մի առվի կամ թփի մոտ եւ լացելով, ողբալով հեռանում», այս տողերի հեղինակը վանեցի Արտաշես Փխրիկյանն է, որը Վանից գաղթել է Երեւան 1915 թվականին: Այդ ժամանակ նա եղել է 21 տարեկան, Արտաշես Փխրիկյանը (1894-1979 թթ.) այն բազմաթիվ հայերից մեկն է, որոնք Մեծ եղեռնի օրերին պարտադրված բռնել են գաղթի ճանապարհը: Տարիներ անց Արտաշես Փխրիկյանը թղթին է հանձնել գաղթի մասին իր դառը հիշողությունները` ստեղծելով «Մեր գաղթը» հուշագրությունը:**



*Վանի Հերոսամարտի դիրքապահ զինվորական խումբ` ղեկավարությամբ ռամկավար Գալուստ Միրիջանյանի, նստածներից աջից երկրորդն Արտաշես Փխրիկյանն է, 1915 թ.:*

Արտաշես Փխրիկյանը նաեւ 1915-ի Վանի Հերոսամարտի մասնակիցներից է, ընդգրկված է եղել ռամկավար Գալուստ Միրիջանյանի մարտական ջոկատում:

«Հազիվ էինք ազատվել 1915-ի ապրիլյան ինքնապաշտպանական կռիվներից, եւ ժողովուրդը սկսել էր կարգի բերել իր քանդված տնտեսությունը, երբ տեղական իշխանությունները պաշտոնապես հայտարարեցին, որ ռուսական բանակը նահանջում է Վանից, ու ժողովուրդը, որքան կարող է շուտ, քանի թուրքերը չեն գրավել Բերկրի գետի կամուրջը, պետք է դուրս գա Վանից եւ Իգդիրի ճանապարհով գաղթի դեպի Երեւան», գրում է Արտաշես Փխրիկյանը: Վերջինիս անտիպ հուշագրությունը` «Մեր գաղթը», «**Ազգին**» սիրով տրամադրել է Ժիրայր Փխրիկյանը` նրա որդին, որը հիմա ապրում է Երեւանում: Ժ. Փխրիկյանն արեւմտահայերենով գրված հուշերը դարձրել է ավելի մատչելի` վերածելով արեւելահայերենի:

Իր հուշագրությունում Արտաշես Փխրիկյանը պատմում է. «Կողոպտված ժողովուրդը նոր էր սկսել վերականգնել իր տնտեսությունը, ուստի գաղթի համար էլ ի՞նչ փոխադրամիջոցներ կարող էր ունենալ: Ոմանք ունեին ընդամենը մի կով կամ մի եզ, լավագույն դեպքում` մի սայլ, իսկ քաղաքացին ոչինչ չուներ, բացի իր երկու ոտքից: Մեր ընտանիքը բաղկացած էր 3 անձից` հայրս, մայրս եւ ես: Հայրս 80 տարեկան էր, մայրս` 67, նաեւ ունեի ինձնից մեծ 2 ամուսնացած քույր: Հայրս ինձ ուղարկեց քույրերիս հետեւից, որովհետեւ նրանք էլ էին մեր հետ գաղթելու»:

Կարճ ժամանակում պատրաստվելուց հետո Փխրիկյանների ընտանիքը բռնում է գաղթի դժնի ճանապարհը: Նույն օրը երեկոյան հասնում են Գյոլու գյուղ, որտեղ գիշերում են եւ առավոտյան նորից ճամփա ընկնում: Ահ ու սարսափը պատել էր ժողովրդին, եւ մարդիկ, ոչ մի արգելքի առջեւ չկանգնելով, ուզում էին որքան հնարավոր է շուտ հասնել Բերկրի գետի կամուրջը:

«Երկրորդ օրը հասանք Բերկրի գյուղ` ամենավտանգավոր տեղը: Գիշերը չկարողացանք լավ հանգստանալ: Գիշերվա կեսն արդեն անցել էր, երբ հասանք գետի կամուրջը: Կես կիլոմետր էլ չէինք անցել, երբ ռուսները փակեցին կամուրջը, որպեսզի սկզբում անցնեն զինվորները, հետո` ժողովուրդը: Երեկոյան ժամը 7-ի մոտ էր, երբ հայրս կարգադրեց կանգնեցնել անասունները, բաց անել վերմակներն անասունների վրա եւ մտնել նրանց տակ,- գրում է Ա. Փխրիկյանը,- ապա սկսեց կարկուտ տեղալ բաց դաշտում կուչ եկած, հոգնած ու տանջված ժողովրդի վրա: Դա տեւեց 20 րոպե, հետո թրջված ու կարկտահարված ժողովուրդը, անիծելով իր օրը, շարունակեց ճանապարհը»:

Հաջորդ գիշերը վանեցիներն անցկացնում են Գավրելամի գյուղում, իսկ չորրորդ օրը երեկոյան հասնում են Մասիս լեռան ստորոտը` Կարաբուլաղ:

«Մեզնից հետո եկողները պատմում էին, որ Բերկրի գետի մոտ` Սեւ Գռա կոչվող լեռներից թուրքերը հարձակվել են, որպեսզի փակեն ճանապարհը: Ժողովրդի միջից զինված տղամարդիկ կռվել են ու հետ մղել թշնամուն: Այդ պահին ժողովուրդը խառնվել է իրար, ոմանք թշնամու ձեռքը չընկնելու համար իրենց գետն են գցել», գրում է հեղինակը:

Փխրիկյանների ընտանիքը մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո վերջապես հասնում է Իգդիր, ապա` Էջմիածին:

«Այնքան ժողովուրդ հավաքվեց Էջմիածնում, որ վանքի բակում էլ տեղ չկար: Կեղտոտության ու զարհուրելի հոտի պատճառով այլեւս հնարավոր չէր մնալ վանքի բակում: Որոշեցինք գնալ Երեւան,- պատմում է Ա. Փխրիկյանը,- երեւանցիները, սակայն, չէին ցանկանում, որ իրենց բակերում գաղթականներ ապրեին: Եթե մեկը մյուսին հարցնում էր . թե ովքե՞ր են տուն ուզողները, պատասխանում էին. «Հայեր չեն, գաղթականներ են»: Նույնիսկ մի թեյ կամ աման չէին տալիս գաղթականներին»:

Ըստ հուշագրության` մի օր Ղանթարի շուկայում թուրք խանութպանը սպառնացել ու ստիպել է մի գաղթականի, որ վերջինս գնի չամիչով լի արկղը, որովհետեւ գաղթականը դիպչել էր չամիչին, ուրեմն կեղտոտվել էր արկղի ողջ չամիչը: Ա. Փխրիկյանը գրում է, որ խանութպանի թուրք հարեւանները շրջապատել էին գաղթականին եւ հայհոյում, խանչալներով սպառնում էին նրան: Վերջինս էլ գրպանից հանել է ատրճանակն ու կրակել օդի մեջ: Ատրճանակի ձայնից հավաքվել են հայ կամավորականներն ու պաշտպանել հային: Հաջորդ օրվանից թուրքերն ուտելիքը 2 մասի էին բաժանում. դրսում դրվածը վաճառում էին հայերին, ներսում դրվածը` թուրքերին:

Հայ գաղթականների համար կյանքը Երեւանում բնավ դրախտային չէր, սակայն ամենածանրն այդ ժամանակ համաճարակային հիվանդություններն էին: Այնքան շատ մարդիկ էին մահանում, որ ֆուրգոնները, քաղաքում շրջելով, հավաքում էին մահացածներին: Փխրիկյանների ընտանիքը, ճիշտ է, կարողացավ փրկվել թշնամուց, բայց դրանից հետո ճակատագիրը դաժան «անակնկալ» էր պատրաստել նրանց համար:

«Հայրս ու մայրս մեռան երկու օրվա տարբերությամբ: Ինչպես ուրիշ մեռելներին, հորս ու մորս էլ տարան ֆուրգոնով, թե որտե՞ղ են թաղել, չգիտենք: Եթե այդ օրերին մի երեւանցի էր մեռնում, լալու ժամանակ ասում էին` գաղթական չկա՞ր` մեռներ, որ դու մեռար,- գրում է Արտաշես Փխրիկյանը,- երկու օրում զրկվելով հորիցս ու մորիցս` մնացի մենակ եւ որոշեցի ապրել քրոջս հետ: Տեսնելով, որ հայրենիք վերադառնալու հույս չկա, որոշեցի մի գործ գտնել: Սկսեցի կտորներ վաճառել Երեւանի փողոցներում»:

Հետզհետե հարմարվելով Երեւանում բնակություն հաստատելու մտքին` Արտաշես Փխրիկյանը տարբեր աշխատանքներ է կատարում`զբաղվում է առեւտրով, կոշկակարությամբ, կտավագործությամբ:

«Քույրս ամեն օր խրատում էր ինձ. «Շուտ արա, ամուսնացիր»: Շատ ստիպելուց հետո համաձայնեցի ամուսնանալ Վանի մեր հարեւանի աղջկա` Աստղիկի հետ, որը Վանում ամեն առավոտ գալիս էր մեր տուն, ու հորեղբորս աղջկա հետ դպրոց էին գնում: Այդ օրերին էլ հայրս ու մայրս ընտրել էին Աստղիկին ինձ համար: Աստղիկի հայրն ալ մեռել էր, մնացել էին ինքն ու մայրը», գրում է հեղինակը:

Ա. Փխրիկյանն ու Աստղիկ Ձանիկյանն ամուսնանում են 1916 թվականին: Համեստ միջոցներով, բայց ապագայի հանդեպ մեծ հավատով ու հույսով նրանք ստեղծում են իրենց ընտանիքը:

Արտաշես Փխրիկյանը, իրապես, նվիրյալ հայրենասեր է եղել: Նրա եւ Վանի Հերոսամարտի մյուս մասնակիցների շնորհիվ է, որ 200 հազար հայեր կարողացել են փրկվել թուրքական յաթաղանից: Ա. Փխրիկյանը մահացել է 85 տարեկանում ինֆարկտից եւ մահանալիս անգամ խոսել է Վանի 1915-ի հերոսական ինքնապաշտպանության մասին:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Վե՞րջ թուրք-իսրայելական ռազմական համագործակցությանը

## *Թուրքիան սառեցնում է հարաբերությունները Իսրայելի հետ, երբ այն կողմից արդեն «սառն են»*

Թուրքիան կսառեցնի երկկողմ հարաբերությունները Իսրայելի հետ, բացառությամբ մասնավոր հատվածի: Այսպիսի վերտառությամբ հոդված է տպագրել թուրքական «Զաման» թերթը՝ անդրադառնալով Թուրքիա-Իսրայել հարաբերությունների ներկա վիճակին, որն, ըստ թերթի, արդյունք է իսրայելցի զինվորականների՝ Գազային հասված հումանիտար օգնություն տեղափոխող «Ազատության նավատորմի» վրա մայիսի 31-ի հարձակման: Սա, հրապարակման համաձայն, բերել է ոչ միայն երկկողմ հարաբերությունների սառեցմանը, սակայն համատեղ նախագծերն ու Իսրայելի հետ ստորագրված պայմանագրերը կմնան այնպես, ինչպես կային:

«Զամանի» տեղեկացմամբ, Պաշտպանական արդյունաբերության իրականացման հանձնաժողովը՝ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նախագահությամբ, քննարկելու է Իսրայելի հետ ռազմական համաձայնագրերի եւ նախագծերի հարցը: Այդպիսիք առնվազն 16-ն են:

Այդուամենայնիվ, պետական մակարդակով բոլոր երկկողմ համաձայնագրերը չեղյալ են հայտարարվել: Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլն էլ հայտարարել է, թե Թուրքիան ծրագիր է մշակել Իսրայելի դեմ պատժամիջոցների կիրառման մասին, նշելով սակայն, որ այդ մասին պետք է հայտարարի կառավարությունը: Այդպիսի ծրագրի գոյության առաջին նշաններն, ըստ պարբերականի, ի հայտ են եկել դեռեւս երկուշաբթի նախարարների խորհրդի նիստում ընդունված որոշմամբ: Իսրայելի հետ հարաբերությունները խզելու Թուրքիայի այդ ծրագիրը մի քանի փուլ է ենթադրում:

«Զամանը» գրում է, որ քանի դեռ Իսրայելը ներկայացուցիչ չի ուղարկել ՄԱԿ-ի՝ հետաքննություն իրականացնող հանձնաժողով, Թուրքիան չի վերադարձնի իր դեսպանին Թել Ավիվ: Բացի այդ, ամեն դեպքում, Թուրքիան չի ընդունի Իսրայելի կողմից իրականացված հետաքննության արդյունքները:

16 խոշոր համաձայնագրեր չեղյալ հայտարարելուն զուգահեռ, Թուրքիան, ըստ հրապարակման, որոշել է նաեւ չհամագործակցել համատեղ ծրագրերում, հատկապես ռազմական կրթության ոլորտում: Որեւէ միջազգային զորավարժություն չի անցկացվի իսրայելցիների հետ, եւ Թուրքիայի օդային տարածքն էլ փակ կլինի Իսրայելի ռազմական ինքնաթիռների համար:

Այդուհանդերձ, դադարեցնելով ռազմական համագործակցությունը, Թուրքիան նաեւ հայտարարում է, որ ռազմական ոլորտի ընկերություններն իրենք կորոշեն իսրայելական ընկերությունների հետ համաձայնագրերի հետագա ճակատագիրը, թեեւ լավ հայտնի է, որ այդօրինակ ընկերություններն ինչպես Իսրայելում, այնպես էլ Թուրքիայում վայելում են իշխանությունների աջակցությունը:

Հետաքրքրական է, որ եւս մեկ կարգի համագործակցություն սառեցվում է Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ: Խոսքը, ըստ «Զամանի», «հակաահաբեկչական համագործակցության համաձայնագրի սառեցման մասին է, որով Թուրքիան արժեքավոր հետախուզական տեղեկություններ էր ստանում 1980-ականներին Լիբանանում ԱՍԱԼԱ-ի ճամբարների մասին»:

Միեւնույն ժամանակ, կորպորատիվ մակարդակի նախագծերը կշարունակվեն: Արդյունաբերության եւ առեւտրի նախարար Զաֆեր Չաղլայանը զգուշացրել է, որ Իսրայելում թուրքական ապրանքները բոյկոտելուն Թուրքիան շատ կտրուկ կարձագանքի:

Այս ամենով հանդերձ, Թուրքիան, ըստ «Անադոլու» գործակալության դիվանագիտական աղբյուրների, Իսրայելին չորս հիմնական պահանջ է ներկայացնում: Նախ Թուրքիան պահանջում է, որ Իսրայելը ներողություն խնդրի «Ազատության նավատորմի» հետ տեղի ունեցածի համար, անցկացվի միջազգային հետաքննություն, փոխհատուցում տրվի եւ վերադարձվեն նավերը: Թուրքական լրատվամիջոցները փոխանցում են, թե Թուրքիան չի պատրաստվում երկար սպասել այդ պահանջների կատարմանը, առավելագույնը՝ մեկ ամիս:

Եվ այսպես, Թուրքիայի կողմից ճանապարհային քարտեզի մշակումից հետո, այդ իսկ պահից Թուրքիան կփորձի մեկուսացնել Իսրայելին: Ավելին, արդեն իսկ Իսրայելի գործողությունները դատապարտած կազմակերպությունների շարքին Թուրքիան, ըստ «Զամանի», կաշխատի ավելացնել նաեւ Եվրամիությանը:

Երեկ արդեն թուրքական հանրային հեռուստատեսության ռուսական ծառայությունը տեղեկացնում էր, թե Եվրախորհրդարանը եւս պատրաստվում է դատապարտել Իսրայելի գործողությունները: Ըստ նույն աղբյուրի, երեկ Եվրախորհրդարան պետք է քվեարկության ներկայացվեր համապատասխան օրինագիծ, որով նախատեսվում է նաեւ Գազայի հատվածի շրջափակման վերացում եւ «Ազատության նավատորմի» վրա տեղի ունեցած հարձակման հետաքննության միջազգային հանձնաժողովի ստեղծում:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Իրանը սպառնալիք չէ տարածաշրջանի համար

*1-ին էջից*

Մինչդեռ նախագահ Օբաման պաշտոնակալման տպավորիչ ելույթում, ապա նաեւ իսլամական աշխարհին Կահիրեից հղած հուսադրող ուղերձում խոստացել էր Մերձավոր եւ Միջին Արեւելքում թուլացնել լարվածությունը: Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցների կիրառումը միանգամայն հակասում է տարածաշրջանի լարվածությունը թուլացնելու տրամաբանությանը: Սակայն պաշտոնական Վաշինգտոնն էլ առաջնորդվում է Իսրայելի շահերին տուրք տալու տրամադրությամբ: Ընդ որում՝ Աֆղանստանի եւ Իրաքի դեմ սանձազերծված պատերազմները կատարյալ մղձավանջի են վերածվել ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների համար: Ժողովրդավարության հաստատումը դեռ մի կողմ, դրանք ընդամենը ողբերգություն են պատճառել աֆղանական եւ Իրաքի ժողովուրդներին: Մթագնել է այս երկրների ապագան, որը մնում է անկանխատեսելի՝ նույնիսկ օկուպանտների համար:

Ավելին, Աֆղանստանի եւ Իրաքի դեմ պատերազմներում ԱՄՆ-ի ձախողումը, ինչպես նաեւ իսլամական աշխարհում հակաամերիկյան տրամադրությունների ծավալումը լուրջ նախադրյալներ են ստեղծել, որ Ռուսաստանը վերականգնի իր երբեմնի դիրքերը ռուսական գերազդեցության տարածքներում եւ որպես գերտերություն, վերստին դրսեւորվի: Հատկապես այն դեպքում, երբ լուրջ ճեղքվածք են տվել գունավոր հեղափոխությունները Վրաստանում, Ուկրաինայում եւ Ղրղզստանում, հունվարին Ղազախստանի եւ Բելառուսի հետ Ռուսաստանը ստորագրել է մաքսային միության պայմանագիր, նույն ամսին Ուկրաինայում իշխանության են եկել ռուսամետ ուժերը, եւ նույնը արդեն Ղրղզստանում է կատարվում:

Ռուսաստանի ոչ սահմանակից Ղրղզստանում ռուսական դիրքերի վերականգնումը չափազանց կարեւոր է Մոսկվայի համար թե՛ որպես գերտերություն դրսեւորվելու, թե՛ որպես Միջին Ասիայում վերահսկողություն հաստատելու առումներով: Ինչ վերաբերում է էներգակիրներին, ապա դրանք էլ կարեւորվում են Արեւելյան Եվրոպայում ռուսական ազդեցության տարածման համար: Համենայն դեպս, Ռուսաստանն այդ էներգակիրները, ինչպես Ուկրաինայի եւ Լիտվայի պարագայում, որպես ազդեցության լծակ արդեն օգտագործել է, քանի որ դրանից միաժամանակ տուժել են Արեւելյան Եվրոպայի երկրները, ուստի նա դրանով սրել է նաեւ այս երկրների հարաբերությունները:

Այլ կերպ, Ռուսաստանն այս երկրներին հակադրել է ինչպես Ուկրաինայի, այնպես էլ Լիտվայի դեմ: Այս ամենը լուրջ ազդակ է, որ ԱՄՆ-ը վերանայի Մերձավոր եւ Միջին Արեւելքում լարվածությունը հետեւողականորեն սրելու քաղաքականությունը: Թերեւս դրա ամենաարդյունավետ միջոցը Իրանի նկատմամբ որդեգրած քաղաքականության վերանայումն է, ինչպես նաեւ իսլամական այս հանրապետությանը որպես սպառնալիք ընկալելու դիրքորոշումից հրաժարվելը: Եթե Իրանը միջուկային զենք ունենալու մտադրություն ունենար, կարող էր առանց ստեղծելու, ատոմային մարտագլխիկ ձեռք բերել:

Հետեւաբար տարածաշրջանի համար սպառնալիքը Իրանի միջուկային զենք ստեղծելու ենթադրյալ մտադրությունները չեն, այլ Հնդկական օվկիանոսում նավարկող ամերիկյան միջուկային զենքով հագեցած նավատորմն է, ինչպես նաեւ Եգիպտոսի թույլտվությամբ Սուեզի ջրանցքից Պարսից ծոց շարժվել պատրաստվող իսրայելական սուզանավերը, որոնք նույնպես բեռնված են միջուկային զենքով:



# Բ. Ասադ. «Իսրայելի արածը հաշտության հույս չի թողնում»

**«Դեպի Գազա մարդասիրական բեռներ տանող նավի վրա Իսրայելի կատարած հարձակումը Մերձավոր Արեւելքում մեծացրել է պատերազմի հավանականությունը», հայտարարել է Սիրիայի նախագահ Բաշար Ասադը BBC-ին տված հարցազրույցում:**

**Նրա խոսքերով, Սիրիան հնարավոր ամեն ինչ արել է զինված հակամարտությունը կանխելու համար, բայց Իսրայելի ներկա վարչակազմի՝ «պատերազմի հրձիգի» որոնք Մերձավոր Արեւելքում հաշտության համաձայնագրերն անհնար են:**

**Ասադը ընդգծել է, որ տարածաշրջանում այժմ իրավիճակը շիկացած է, եւ որ «Ազատության նավատորմիղի» նավի վրա իսրայելցիների հարձակման ընթացքում պաղեստինամետ 9 ակտիվիստների՝ Թուրքիայի քաղաքացիների սպանությունը լուրջ հետեւանքներ կունենա Իսրայելի համար:**

**«Մայիսի 31-ի միջադեպը մոտ ապագայում հաշտության հույս չի թողնում», նշել է Ասադը: Հարձակումը տեղի էր ունեցել միջազգային ջրերում, Գազայի ափից 64 կմ հեռավորության վրա: Թուրքիան պահանջում է, որ միջադեպի հանգամանքների քննության նպատակով ստեղծվի միջազգային անկախ հանձնաժողով:**



**Բաշար Ասադը հերքել է այն լուրերը, թե Սիրիան զինում է Լիբանանում գործող «Հզբոլլահ» արմատական շարժման մարտիկներին:**

**Ինչ վերաբերում է Սիրիա-Իրան բարեկամական կապերի առնչությամբ ԱՄՆ-ի կշտամբանքներին, Ասադը հայտարարել է բառացիորեն հետեւյալը. «Մենք պատրաստ ենք ԱՄՆ-ի հետ կառուցել գործարար հարաբերություններ, ընդհանուր բիզնես, բայց Իրանը կմնա մեր բարեկամը եւ դաշնակիցը»:**

# Եվրոմիության վիզա Վրաստանի քաղաքացիների համար արդեն 35 եվրոյով

Վրաստանի քաղաքացիները Վրաստան-ԵՄ երեկ ստորագրված համաձայնագրի հիման վրա այսուհետեւ կվճարեն ոչ թե 60, այլ 35 եվրո: Վիզաների տրամադրման ժամկետները կարող են երկարաձգվել, սակայն որոշ դեպքերում էլ կրճատվել մինչեւ 2 օր՝ առավելագույն 30 օրվա փոխարեն:

ԵՄ պաշտոնական տեղեկատվության համաձայն, վիզաների տրամադրման կարգի պարզեցման միջոցով ԵՄ մուտքի հնարավորություն կստանան 22 կատեգորիաների քաղաքացիները:

Մասնավորապես, 13 կատեգորիաների համար փաստաթղթերի ներկայացումը վիզայի ստացման համար կդառնա անհատական մոտեցմամբ: 11 կատեգորիաների անձանց համար ենթադրվում է մեկ տարվա վիզայի տրամադրում, եթե նախորդ տարի տվյալ անձը արդեն ստացել է վիզա եւ օգտագործել ԵՄ օրենսդրության համաձայն, առանց խախտումների: Ավելին, հետագայում նույն այդ անձինք հնարավորություն կստանան բազմակի մուտքի վիզաներ ստանալու՝ 2-5 տարի ժամկետով:

Որոշ կատեգորիաների ներկայացուցիչների համար նախատեսված է անմիջապես բազմակի մուտքի վիզաների ստացում: Իսկ Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչները հնարավորություն կստանան առանց վիզայի ԵՄ տարածքում մնալու մինչեւ 90 օր:

Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Վրաստանի խորհրդարանի եւ Եվրախորհրդարանի վավերացումից հետո:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Ղրղզստանը ԱՄՆ-ից կստանա 32 մլն դոլար օգնություն



**ԱՄՆ պետդեպարտամենտը երեկ պաշտոնապես հայտարարել է, որ Ղրղզստանին կհատկացվի ավելի քան 32 մլն դոլարի մարդասիրական օգնություն: Միջոցները կհատկացվեն երկրի ենթակառույցի վերականգնմանը եւ առաջնային սոցիալական նախագծերի իրականացմանը:**

**ՌԻԱ գործակալության տվյալներով, փողերի զգալի մասը կօգտագործվի Ղրղզստանում հակամարտությունից տուժած փախստականներին դեղորայքով եւ առաջին անհրաժեշտության առարկաներով ապահովելու նպատակով:**

**Պետդեպարտամենտում ընդգծում են, որ 32 միլիոնը վերջնական թիվ չէ եւ հետագայում կարող է աճել: Բացի դրանից, ԱՄՆ-ը կշարունակի ամեն տարի Ղրղզստանի զարգացմանն ուղղված միջոցների վճարումն ավելի վաղ ձեռք բերված համաձայնությունների շրջանակներում:**

**ՄԱԿ-ը, ԵՄ-ի որոշ պետություններ, Ռուսաստանը եւ այլ երկրներ նույնպես սկսել են մարդասիրական օգնություն ուղարկել Ղրղզստան:**

**Վերջինիս ժամանակավոր կառավարությունը հունիսի 16-ին Ղրղզստանի ժողովրդին եւ համաշխարհային ընկերակցությանն ուղղված դիմումի մեջ ընդգծել է, որ կայունության կարելի է հասնել սահմանադրության հանրաքվեի եւ խորհրդարանական ընտրությունների միջոցով: Որոշված է հանրաքվեն անցկացնել հունիսի 27-ին, ընտրությունները՝ քիչ ավելի ուշ:**

**Փորձագետների կարծիքով, ժամանակավոր կառավարության այս աճապարանքը կապված է հնարավորինս շուտ օրինական կարգավիճակ ստանալու անհրաժեշտության հետ: Միայն նման կարգավիճակով Բիշքեկը կարող է բանակցություններ սկսել կարգուկանոնի հաստատման նպատակով օտարերկրյա ուժեր հրավիրելու շուրջը:**

AZG NEW PDF.qxd 17/06/2010 20:18 Page 1



# Իր ժամանակի մեջ, բայց միշտ ժամանակի հետ՝ Պարույր Սեւակ

Հունիսի 17-ը ականավոր բանաստեղծ Պարույր Սեւակի մահվան օրն է: Բանաստեղծն իր մահկանացուն կնքեց 1971 թվականին, նրա հիշատակին նվիրված միջոցառումներ էին երեկ կազմակերպվել բանաստեղծի ծննդավայրում՝ Զանգակատուն (նախկին Չանախչի) գյուղում:



«Պարույր Սեւակը նորոգեց գեղարվեստական մտածողության ողջ համակարգը: Նա այն գծի շարունակողն էր, որն ուղղված էր դեպի համաշխարհային քաղաքակրթությունը», երեկ «Հենարան» ակումբում նշեց գրականագետ **Դավիթ Գասպարյանը**:

Պարույր Սեւակն իր հետ բերեց գեղարվեստական մտածողության նոր փուլ, որն էլ հիմնավորեց «Մարդն ափի մեջ» եւ «Եղիցի լույս» ստեղծագործություններով:

«Ժամանակին թվում էր, թե պետության կողմից գնահատված էր Պարույր Սեւակը, սակայն այդ պետությունը կալանքի տակ էր պահում նրա գաղափարական խոսքը՝ «Եղիցի լույսը»: Այսօր մեր գրականագիտության նպատակն է Պարույր Սեւակին լիարժեքորեն հասցնել ընթերցողին», ասաց Դ. Գասպարյանը: Գրականագետը ըժգոհեց, որ բանաստեղծի ժառանգությունն արդեն վաղուց դարձել է մասնավոր սեփականություն. «Թանգարանում դրված չէ, որ մարդիկ գնան, ուսումնասիրեն, այնինչ Պ. Սեւակի ժառանգությունը համազգային սեփականություն է, ոչ թե անձնական»:

Ներկայումս փորձ է արվում ուսումնասիրելու Պ. Սեւակի ստեղծագործությունները նաեւ համաշխարհային գրական կոնտեքստում, սակայն, ըստ գրականագետի, բանաստեղծին համաշխարհային ասպարեզ հանելու առաջին նախապայմանը նրա գործերի լավ թարգմանությունն է:

Դ. Գասպարյանի կարծիքով՝ այսօր էլ կան տաղանդավոր արձակագիրներ, բանաստեղծներ ու քննադատներ, սակայն դրության տերը երբեմն չեն լինում ժամանակակից Սեւակը կամ Չարենցը, այլ՝ միանգամայն ուրիշ մարդիկ:

Ի. Պ.

# Վահան Տերյան՝ ռոմանսի բանաստեղծ



Երեկ Խնկո Ապոր եւ երաժշտագիտական գրադարանների նախաձեռնությամբ տեղի ունեցավ Վահան Տերյանի 125-ամյակին նվիրված գերեկույթ: Միջոցառման ժամանակ հնչեցին Վահան Տերյանի բանաստեղծություններն ու ռոմանսներ:

Երգիչ Հենրիկ Սիմոնյանը ուսանողական տարիներից մասնակցել է Վահան Տերյանին նվիրված բոլոր միջոցառումներին: Նրա մեկնաբանությամբ՝ չկա սերունդ, որ չի հիացել Վահան Տերյանի բանաստեղծություններով: Նրա ստեղծագործություններում առկա սերը, խոհերն ու անուրջները հուզել են բոլորին: Պատահական չէ, որ այս միջոցառմանը մասնակցող անվանի երաժիշտների ու ասմունքողների կողքին ներկայանում են նաեւ երիտասարդները:

«Երկրորդ կուրս էի, տոնում էին Վահան Տերյանի 90-ամյակը: Կատարեցի Ռոմանոս Մելիքյանի երկու ռոմանսները, եւ այդ օրվանից Վահան Տերյանի բանաստեղծությունների հիման վրա գրված ռոմանսները դարձան երգացանկի զարդը: Նրա բանաստեղծությունների հիման վրա գրված ռոմանսները հրաշալի են եւ ներկայացնում են բանաստեղծ հուզական աշխարհը», նկատեց նա:

Հ. Հ.

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

# Վարուժան Վարդանյան



Հայ կերպարվեստը ծանր կորուստ կրեց: Կյանքի 62-րդ տարում վախճանվեց անվանի գեղանկարիչ, արվեստաբան, Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարիչ Վարուժան Վարդանյանը:

Վարուժան Վարդանյանը ծնվել է 1948 թ. հունիսի 22-ին Թումանյանի շրջանի Ղաչաղան (այժմ՝ Արեւածագ) գյուղում: Սովորել է Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում: 1971-74թթ. աշխատել է Հայաստանի ազգային հեռուստատեսությունում՝ որպես արվեստի բաժնի խմբագիր: 1967-ից մասնակցել է հանրապետական եւ միութենական ցուցահանդեսների: 1976-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է: Նրա ստեղծագործության մասին հիացմունքով են արտահայտվել Մինաս Ավետիսյանը, Վիլյամ Սարոյանը, Հրանտ Մաթեւոսյանը, հայ եւ օտարազգի բազմաթիվ նշանավոր արվեստագետներ:

Վ. Վարդանյանի նկարները ցուցադրվել են աշխարհի բազմաթիվ երկրներում, տեղ գտել մասնավոր հավաքածուներում, հեղինակավոր թանգարաններում, այդ թվում՝ Մոսկվայի Տրետյակովյան թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում, Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանում եւ այլն: Ճանաչված գեղանկարիչը արժանացել է բազմաթիվ մրցանակների եւ կոչումների. այդ թվում նաեւ Հայաստանի երիտասարդ նկարիչների՝ տարվա լավագույն նկարի մրցանակ (1975), Կոմերիտմիության մրցանակի դափնեկրի կոչում (1978), «Թեքեյան» մշակութային միության մրցանակ (1997), «Հովհաննես Թումանյանի հետնորդ» պատվավոր կոչում (2010) եւ այլն: Ստեղծագործական պատկառելի վաստակի եւ հայ կերպարվեստի զարգացման ասպարեզում ունեցած նշանակալի ներդրման համար 2003 թ. նրան շնորհվել է ՀՀ վաստակավոր նկարչի պատվավոր կոչում: Բազմաշնորհ արվեստագետն աչքի է ընկել նաեւ արվեստաբանական հոդվածներով եւ գրական ստեղծագործություններով: Հեղինակ է տասնյակ հոդվածների եւ երկու գրքի. «Մինասի վերադարձը» (նոթագրություններ, 1992 թ.) եւ «Կեղտոտ սենյակ» (բանաստեղծությունների ժողովածու, 1994 թ.): Վարուժան Վարդանյանը գերազանց տիրապետում էր իր երկրի ու ժողովրդի մշակութային ժառանգությանը եւ իր արվեստով լավագույնս կամրջում էր ազգային մշակույթի ավանդույթներն ու ժամանակակից արվեստը: Նրա ծանրակշիռ խոսքն ու հիմնավոր վերլուծությունները ընդունելի էին հանրության ամենալայն շրջանակներում:

Մեծատաղանդ արվեստագետի վաղաժամ մահը անհասուցելի կորուստ է նրա արվեստի բազմահազար երկրպագուների համար:

***

Ինչպես տեղեկացանք ՀՀ մշակույթի նախարարությունից, Վարուժան Վարդանյանի մահվան կապակցությամբ ստեղծվել է թաղման կառավարական հանձնաժողով, որի որոշմամբ քաղաքացիական հոգեհանգիստը եւ վերջին հրաժեշտը տեղի կունենա հունիսի 18-ին, ժամը 12-14-ը՝ Հայաստանի նկարիչների միությունում, հուղարկավորությունը՝ Երեւանի քաղաքային պանթեոնում:

Մ. Մ.

# Ռոքի հայ երկրպագուները սպասում են Սերժ Թանգյանին

Աշխարհահռչակ System of a Down ալտերնատիվ մետալ-ռոք խմբի եւ Axis of Justice («Արդարության առանցք») հասարակական կազմակերպության հիմնադիր, ամերիկահայ հռչակավոր երաժիշտ Սերժ Թանգյանի առաջին մենահամերգը Հայաստանում կկայանա օգոստոսի 12-ին: Ռոքի բոլոր սիրահարներին Թանգյանը կժամադրի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում ու մի քանի ժամ կպարգեւի անմոռանալի զգացողություններ եւ երաժշտական խելահեղ ռիթմեր:



Լոս Անջելեսի «Ֆյուչիթիվ ստուդիոս» եւ «Դիմ Քոմյունիքեյշնս» ընկերությունների հայաստանյան ներկայացուցչության տնօրեններ Արմեն Գուբելյանն ու Րաֆֆի Նիզիբյանը խոստանում են՝ համերգն անցնելու է շքեղ լուսավորությամբ եւ ձայնային նորագույն սարքավորումներով: Սերժ Թանգյանը հանդես կգա խմբի 6 երաժիշտների հետ՝ նվագակցությամբ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի երաժիշտների:

Միջոցառումը, որ նախատեսվում է լինել տարվա թիվ մեկ երաժշտական համերգը, պահանջել է երկու տարվա տքնաջան աշխատանք՝ Թանգյանը խստապահանջ է, լուրջ է մոտենում իր յուրաքանչյուր համերգին: «Թանգյանը միշտ էլ փափագել է գալ Հայաստան եւ մենահամերգ ունենալ: Նա հայության մասին միշտ բարձր կարծիք է ունեցել եւ օտարների մոտ սիրով ու առանձնահատուկ ջերմությամբ է խոսում հայրենիքի մասին», նկատում են կազմակերպիչները:

Համերգի գուցե մեծագույն անակնկալը լինի Թանգյանի՝ հայերենով երգել: Այս կապակցությամբ ընթանում են բանակցություններ երաժշտի եւ կազմակերպիչների միջեւ: Տոմսերը կվաճառվեն հուլիսի 1-ից: Արժեքը կտատանվի 4000-ից մինչեւ 50000-ի սահմաններում:

Աշխարհի 26-րդ լավագույն մեթալ վոկալիստ ճանաչված Սերժ Թանգյանը երաժշտական գործունեությունից զատ վերջերս հիմնադրել է Serjical Strike ձայնագրման ստուդիան եւ մասնակցում է բարեգործական միջոցառումներին: Նա հաճախ է հանդես գալիս անարդարությունն ու դաժանությունը դատապարտող ելույթներով: Երգերում արդարության ձգտող Թանգյանը Axis of Justice կազմակերպության միջոցով աջակցում է երիտասարդներին՝ պաշտպանելու իրենց իրավունքները քաղաքականության ոլորտում: Այդ առումով նա կազմակերպել է բարեգործական արշավներ, որոնք լայն արձագանք են ստացել:

Հ. Հ.

# Մինասի 2 որմնանկար կամրացվի եւ կառավարության շենք կտեղափոխվի

Ինչպես **«Ազգին»** տեղեկացրեց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, արդեն ավարտվել է Գյումրի քաղաքի «Էլեկտրատեխնիկական գործարան» ՓԲԸ նախկին ճաշարանի շենքում գտնվող «Թոռոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարի վերականգնման եւ Ջաջուռում գտնվող Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանում տեղադրելու աշխատանքները:

Երեկ կառավարության նիստում որոշվել է այդ նույն գործարանի ճաշարանի շենքում գտնվող «Հանդիպում (15 թվական)» եւ «Խաչքարի մոտ» որմնանկարներն ամրացնելու նպատակով «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամին որպես նվիրաբերություն տրամադրելու համար ՀՀ մշակույթի նախարարությանը հատկացնել 200000 դրամ: «Այժմ տեղափոխվելիք որմնանկարները ավելի մեծ են՝ (5,5X3,5) նախորդից, ուստի դրանց վերականգնման եւ տեղափոխման համար կպահանջվի շուրջ 200000 դրամ, ու այդ աշխատանքներին իտալացի վերականգնողների հետ նաեւ հայ մասնագետներ կաշխատեն: Այդպիսով Մինասի եւս երկու որմնանկարները վերջնականապես կփրկվեն անդառնալի ոչնչացումից: Սակայն դեռ շատ որմնանկարներ կանգնած են ոչնչացման եզրին եւ այդ հարցը լուծելու համար ելքեր ենք փնտրում», ասաց նախարարը: Վարչապետը տեղեկանալով որմնանկարների տխուր իրավիճակին, նախարարությանը առաջարկել է դրանք աճուրդի կամ այլ ձեւով օտարելու միջոցով տրամադրել մասնավոր այն ընկերություններին, որոնք կցանկանան իրենց գրասենյակներում ունենալ Մինաս Ավետիսյանի ստեղծագործությունները: Ընդ որում, պայմանը պետք է լինի այն, որ որմնանկարները վերականգնվեն եւ հասանելի լինեն մարդկանց, ասաց նախարարը եւ ավելացրեց, որ այդ հարցը դեռ լուծման փուլեր պետք է անցնի ու նաեւ ստանա մասնագետների կարծիքները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Հայտնի դարձավ Մոնրեալի Թեքեյան մշակութային միության «Սարո Պետրոսյան» բարեգործական հիմնադրամի մրցույթի հաղթողը

Մոնրեալի Թեքեյան մշակութային միությունը մշակութասեր եւ հայրենասեր հովանավորների նախաձեռնությամբ ստեղծել է «Սարո Մանուկյան» բարեգործական հիմնադրամը:

Հիմնադրամն ամեն տարի անցկացնում է մրցույթ ազգային նվագարանների համույթների միջեւ՝ նպատակ հետապնդելով նպաստել ու խրախուսել ազգային նվագարանների պահպանման, տարածման, ինչպես նաեւ հայ կատարողական արվեստը: Համոզված ենք, որ նմանօրինակ հայրենանվեր ձեռնարկ-մրցույթների շարունակականությունը կպահովի հայապահպանության եւ հայ մշակույթի տարածման գործին:

Մրցույթին մասնակցեցին ինչպես Կանադայի հայ համայնքի, այնպես էլ հայաստանցի երգահան-երաժիշտները:

Սահմանված էր բարձրագույն դրամական մեկ մրցանակ:

«Սարո Մանուկյան» բարեգործական հիմնադրամի մրցույթի ժյուրին եւ Մոնրեալի Թեքեյան մշակութային միության վարչությունը՝ ամփոփելով այս տարվա մրցույթի արդյունքները, միաձայն որոշեցին դրամական մրցանակը հանձնել հայաստանցի մասնակիցներ Արթուր Կարապետյանին (երգահան, դուդուկահար), Բորիկ Կարապետյանին (դուդուկահար), Ֆելո Պետրոսյանին, Արտյոմ Հովհաննիսյանին, Վարդան Եղիազարյանին, Վիգեն Օհանյանին եւ Դավիթ Գրիգորյանին (թառահար):

Ըստ ժյուրիի անդամների՝ երաժիշտները զմայլեցին իրենց հուզառատ կատարողական վարպետությամբ, եւ որպես հաջալերանք՝ ազգային նվագարանների համույթին տրվեց նախատեսված մրցանակը:

Ըստ էության, Մոնրեալի Թեքեյան մշակութային միությունը ողջ տարվա ընթացքում կազմակերպում եւ հայ համայնքին է ներկայացնում տարբեր մշակութային ձեռնարկումներ՝ համերգներ, ցուցահանդեսներ, մրցույթներ եւ հիշարժան գրական-գեղարվեստական հանդիսություններ:

Այս ամենն իրապես ապահովում են սերունդների միջեւ հոգեւոր կապը, նպաստում եւ գործնականում ամրապնդում հայապահպանությանը միտված ջանքերը:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀԹՄՄ վարչության անդամ
Մոնրեալ-Երեւան

# Իգուաինը նոկաուտի ենթարկեց հարավկորեացիներին

Հարավաֆրիկյան Հանրապետության եւ Ուրուգվայի հավաքականների մրցավեճով մեկնարկեց աշխարհի առաջնության 2-րդ տուրը: A խմբում կայացած առաջին տուրի 2 հանդիպումներն էլ ավարտվել էին ոչ-ոքի արդյունքով, ուստի 2-րդ տուրում հաղթած հավաքականը լուրջ հայտ էր ներկայացնելու 1/8 եզրափակիչի ուղեգրի համար: Դա հաջողվեց Ուրուգվայի հավաքականին, որն աչքի ընկավ արդյունավետ խաղով ու գերմանացիներից հետո առաջնությունում խոշոր հաշվով 2-րդ հաղթանակը տոնեց: Դաշտի տերերի ջախջախիչ պարտության հիմքը դրեց Դիեգո Ֆոռլանը, որը պարզապես ֆանտաստիկ գոլ խփեց հեռահար հարվածով: Այնուհետեւ Ֆոռլանն իրացրեց 11 մ հարվածն ու 2 գնդակով գլխավորեց լավագույն ռմբարկուների ցուցակը: Իսկ հարավաֆրիկացիները մնացին 10 հոգով. մրցավար Բուզական դաշտից հեռացրեց դարպասապահ Կունեին, որը խախտել էր կանոնները Սուարեսի հետ պայքարում:



Դաշտի տերերի ջախջախումն ուրուգվայցիներն ավարտեցին ավելացված ժամանակի 4-րդ րոպեին: Աչքի ընկավ Ա. Պերեյրան: Այս պարտությունը ՀԱՀ հավաքականի համար կարող է ճակատագրական լինել: Աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ հնարավոր է, որ կազմակերպիչ երկրի հավաքականը չհաղթահարի խմբային մրցաշարի արգելքը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Կառլոս Ալբերտո Պարեյրա (ՀԱՀ)**-Մենք պարտվեցինք մի խաղում, որում նվազագույնը պետք է գոնե մեկ միավոր վաստակեինք: Հաշիվը բնավ էլ չի համապատասխանում խաղադաշտում ծավալված իրադարձություններին: Սակայն չպետք է թեւաթափ լինել: Ֆրանսիացիների նկատմամբ նույնիսկ 1-0 հաշվով հաղթանակի դեպքում հաջորդ փուլ դուրս գալու հնարավորություն կունենանք:

Մենք հիասթափված ենք մրցավար Մասիմո Բուզակիի գործողություններից: Նա հորինեց 11 մ հարվածը, քարտեր ցույց տվեց, որոնց կարիքը չէր զգացվում: Նա այս մրցաշարի վատագույն մրցավարն է եւ հանդիպման սկզբից շատ վատ էր սպասարկում խաղը: Հուսով եմ, որ նրան այլեւս չեն վստահի աշխարհի առաջնության հանդիպումները սպասարկել:

**Օսկար Տաբարես (Ուրուգվայ)**-Մենք ժամանել ենք ՀԱՀ, որպեսզի 1970-ից հետո առաջին անգամ մտնենք հաջորդ փուլ: Մենք դեռ նպատակին չենք հասել, սակայն այս պահին հենց մեր թիմն է գլխավորում աղյուսակը: Դա մեր ֆուտբոլիստների քրտնաջան աշխատանքի արդյունքն է: Մենք ողջ խաղի ընթացքում գրոհում էինք, մրցակցի նկատմամբ մամլիչ գործողություններ էինք կիրառում: Մինչեւ Մեքսիկայի հավաքականի հետ հանդիպումը դեռ ժամանակ կա եւ վերլուծելով անցկացրած 2 խաղերը, կգտնենք խաղն ուժեղացնելու լրացուցիչ միջոցներ:

Ես աշխատում եմ մրցավարի գործողություններին գնահատական չտալ: Ինչ վերաբերում է 11 մ հարվածին, ապա Բուզական կարող էր այն նշանակել նաեւ այլ դրվագներում: Ծիծաղելի է լսել, թե մենք հաղթեցինք մրցավարի շնորհիվ: Պարզապես մենք գերազանցեցինք մրցակցին:

Երեկ 2-րդ տուրի հանդիպումներն անցկացրին B խմբում ընդգրկված հավաքականները: Հատկապես մեծ հետաքրքրություն էր ներկայացնում խմբի առաջատարներ Արգենտինայի եւ Հարավային Կորեայի հավաքականների մրցավեճը: Այդ խաղում հաղթողը գործնականում կապահովեր մասնակցությունը հաջորդ փուլին: Բնականաբար, հաղթողի հավակնորդ էր համարվում Արգենտինայի հավաքականը, որը նախկինում երկու անգամ հաղթել է հարավկորեացիներին: Այդ հանդիպումներից մեկը կայացել է 1986-ին Մեքսիկայում տեղի ունեցած աշխարհի առաջնությունում: Խմբային մրցաշարում արգենտինացիները հաղթեցին 3-1 հաշվով եւ հետագայում նվաճեցին աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Հետաքրքրական է, որ այդ խաղին մասնակցում էին հավաքականների ներկայիս գլխավոր մարզիչներ Դիեգո Մարադոնան եւ Չուն Մուն: Ընդ որում վերջինիս հանձնարարված էր խաղալ Մարադոնայի դեմ:

Բուքմեյքերներն էլ բարձր են գնահատել արգենտինացիների հաղթելու հնարավորությունը (1,40): Ոչ-ոքի արդյունքը գնահատվել է 4,20 գործակցով, իսկ հարավկորեացիների հաղթանակի գործակիցը 8,50 է:

Դիեգո Մարադոնայի սաներն իրենց գերազանց դրսեւորեցին՝ 4-1 հաշվով ջախջախելով մրցակցին: Արդյունավետ խաղով աչքի ընկավ Գոնսալո Իգուաինը՝ դառնալով առաջնության անդրանիկ հեթ տրիկի հեղինակ, որի շնորհիվ 3 գնդակով գլխավորեց առաջնության լավագույն ռմբարկուների ցանկը: Մեկ գնդակ սեփական դարպասը խփեց հարավկորեացի Պակ Չու Յունը: Իսկ նրա թիմակից Լի Չուն Յոնը գրավեց արգենտինացիների դարպասը:

Բավական հետաքրքրական եւ լարված մրցավեճում անցավ Նիգերիայի եւ Հունաստանի հավաքականների հանդիպումը: Արդեն 16-րդ րոպեին նիգերիացի Կալու Ուչեն բացեց հաշիվը: Սակայն հետագայում նիգերիացիները մնացին 10 հոգով եւ Դիմիտրիոս Սալպինգիդիսը վերականգնեց հավասարակշռությունը: Ընդմիջումից հետո հույներին հաջողվեց իրացնել թվային առավելությունը: Թորոսիդիսը կամային հաղթանակ պարգեւեց իր թիմին (2-1):

**Մրցաշարային աղյուսակներ**

**A խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ուրուգվայ | 2 | 1 | 1 | 0 | 3-0 | 4 |
| 2. Մեքսիկա | 1 | 0 | 1 | 0 | 1-1 | 1 |
| 3. Ֆրանսիա | 1 | 0 | 1 | 0 | 0-0 | 1 |
| 4. ՀԱՀ | 2 | 0 | 1 | 1 | 1-4 | 1 |

**«B» խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Արգենտինա | 2 | 2 | 0 | 0 | 5-1 | 6 |
| 2. Հար. Կորեա | 2 | 1 | 0 | 1 | 3-4 | 3 |
| 3. Հունաստան | 2 | 1 | 0 | 1 | 2-3 | 3 |
| 4. Նիգերիա | 2 | 0 | 0 | 2 | 1-3 | 0 |

# Հաղթեց միայն Ավետիք Գրիգորյանը

**Վորոնեժի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում հայ շախմատիստներից միայն Ավետիք Գրիգորյանը հաղթանակ տոնեց: Նա սպիտակներով պարտության մատնեց Ռուսաստանը ներկայացնող միջազգային վարպետ Գեւորգ Հայրապետյանին: Ավետիքը 5 տուրից հետո վաստակած 3,5 միավորով ընթանում է 17-րդ տեղում:**

**Սուրեն Պողոսյանը հաշտություն կնքեց Եվգենի Կալեգինի հետ, Վարդան Գրիգորյանն էլ միավորը կիսեց Նիկոլայ Եֆանովի հետ մրցավեճում: Տիգրան Սիմոնյանն ու Աղասի Ինանցը պարտվեցին: Պողոսյանը 2,5 միավորով 56-րդ տեղում է: Վարդան Գրիգորյանը վաստակել է 2 միավոր, Տիգրան Սիմոնյանն ու Աղասի Ինանցն ունեն 1,5-ական միավոր:**

**Մրցաշարային աղյուսակը միանձնյա գլխավորում է ռուսաստանցի Վյաչեսլավ Զախարցովը, որն ունի 4,5 միավոր: Նա սպիտակներով հաղթեց ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանին: 4-ական միավորով առաջատարին հետապնդում են Իգոր Գլեկը, Պավել Պոնկրատովը, Ալեքսանդր Ռախմանովը, Դենիս Խիսմատուլինը, Սեմյոն Դվոյրիսը եւ Դմիտրի Կոկարեւը:**

# Մարադոնան պատասխանեց Պելեին ու Պլատինիին

**Համաշխարհային ֆուտբոլի երկու հանրահայտ «աստղեր»՝ Պելեն ու Դիեգո Մարադոնան մեկ անգամ չէ, որ փորձել են նսեմացնել միմյանց: Աշխարհի առաջնության ժամանակ էլ նրանք իրենց կարծիքն են արտահայտել: Պելեն նշել է, որ Դիեգո Մարադոնան փողի համար է ստանձնել Արգենտինայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնը: Ըստ Պելեի, նրա գլխավորությամբ արգենտինացիները շատ վատ էին խաղում աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում: Դրանում Պելեն առաջին հերթին մեղադրել է նրանց, ովքեր Մարադոնային վստահել են պատասխանատու այդ պաշտոնը:**

**Բնականաբար, Մարադոնան չէր կարող չպատասխանել Պելեին: Պատասխանը շատ հակիրճ էր. «Պելեին հարկավոր է թանգարան ուղարկել»: Մարադոնան իր կարծիքն է արտահայտել նաեւ ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինիի մասին, որն աշխարհի չեմպիոնի հավակնորդների թվում չէր նշել արգենտինացիներին:**

**«Պլատինին, ինչպես եւ բոլոր ֆրանսիացիները, կարծում է, թե ինքը բոլորից խելացի է: Իսկ նա այդպես էլ չկարողացավ լավ մարզիչ դառնալ: Զգում եմ, որ կարող եմ օգնել իմ ֆուտբոլիստներին նվաճելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը եւ վայելել հաղթանակի այն բերկրանքը, որը ժամանակին զգացել եմ», հայտարարել է Մարադոնան:**

ԾԱՆՐԱՄԱՐՏ

# Զորիկ Պողոսյանին չհաջողվեց մեդալ նվաճել

**Սոֆիայում ընթացող ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնությունում մրցահարթակ դուրս եկավ Հայաստանի երկու ներկայացուցիչներից առաջինը՝ Զորիկ Պողոսյանը: Մինչեւ 69 կգ քաշային ծանրորդների մրցավեճում Զորիկին չհաջողվեց մեդալ նվաճել: Նա երկամարտի 301 կգ (133+168) արդյունքով զբաղեցրեց 4-րդ տեղը: 20-ամյա հայ ծանրորդը կարող էր բրոնզե մեդալ նվաճել պոկում վարժությունում՝ հաջորդաբար բարձրացնելով 127, 131 եւ 133 կգ: Նույնպիսի արդյունք ցույց տվեց նաեւ թուրք ծանրորդ Սուլեյման Ռուզգարը, որն անձնական քաշով 580 գրամով թեթեւ էր Զորիկից, ուստի բրոնզե մեդալը բաժին հասավ նրան: Այս վարժությունում չեմպիոն հռչակվեց ռումինացի Մարտին Ռազվանը, որը ցույց տվեց 151 կգ արդյունք: Արծաթե մեդալը նվաճեց չինացի Դեշանգ Տանգը՝ 147 կգ:**

**Զորիկ Պողոսյանն անհաջող հանդես եկավ հրում վարժությունում: Նա միայն առաջին մոտեցումը հաջող կատարեց՝ բարձրացնելով 168 կգ: Իսկ ահա 176 կգ-անոց ծանրաձողը նրան չենթարկվեց հաջորդ երկու փորձերի ժամանակ: Պողոսյանն այս վարժությունում գրավեց 5-րդ տեղը:**

**Հրում վարժությունում էլ անգերազանցելի էր ռումինացի Մարտին Ռազվանը (189 կգ), որն էլ երկամարտի արդյունքով հռչակվեց աշխարհի չեմպիոն: 2-րդ տեղը 327 կգ արդյունքով գրավեց չինացի Դեշանգ Տանգը, իսկ բրոնզե մեդալակիր դարձավ ալբանացի Դանիել Գոդելին՝ 315 կգ: Այսպիսով, առաջին անգամ այս առաջնությունում չինացի մարզիկը չեմպիոն չդարձավ:**

**Իսկ ահա կանանց մրցաշարում չինացի մարզուհիներն արդեն 3-րդ ոսկե մեդալը նվաճեցին: Մինչեւ 58 կգ քաշայինների մրցավեճն ավարտվեց Մենգրոնգ Դենգի հաղթանակով: Նա երկամարտում ցույց տվեց 221 կգ (98+123) արդյունք: 2-րդ տեղը գրավեց թայլանդցի Պիմսիրի Սիրիկաեւը՝ 210 կգ (90+120): Բրոնզե մեդալը նվաճեց կոլումբիացի Լինա Ռիվասը՝ 205 կգ (91+114):**

# Սարգսյանն անդրանիկ պարտությունը կրեց

**Իսպանիայում ընթացող Ռուի Լոպեսի շախմատի հուշամրցաշարի 5-րդ տուրն անհաջող էր Գաբրիել Սարգսյանի համար: Նա անդրանիկ պարտությունը կրեց՝ սեւերով զիջելով մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ (2722) ունեցող ռուսաստանցի գրոսմայստեր Վլադիմիր Մալախովին: Գաբրիելը 3 միավորով Մալախովի եւ Կառուանայի հետ բաժանում է 3-5-րդ տեղերը:**

**Միանձնյա առաջատարի դերը ստանձնեց Իվան Չեպարինովը, որը հաղթելով Իվան Սալգադոյին, վաստակեց 4 միավոր: Սալգադոն 3,5 միավորով 2-րդ տեղում է: Առաջին հաղթանակը տոնեց Պիա Կրամլինգը՝ պարտության մատնելով Դեյսի Կորիին: Կրամլինգը վաստակեց 1,5 միավոր եւ հետնապահի տեղը զիջեց Կորիին ու Մանուել Պերես Կանդելարիոյին: Վերջինս հաղթեց Ֆաբիանո Կառուանային եւ առաջին միավորը վաստակեց:**

# 9-րդ ուղեգիրը Հրայր Մաթեւոսյանին

**Օգոստոսի 12-26-ը Սինգապուրում անցկացվելիք պատանեկան ամառային օլիմպիական առաջին խաղերին մասնակցող Հայաստանի պատվիրակների թիվն ավելացավ եւս մեկով: Բռնցքամարտի միջազգային ֆեդերացիան մասնակցության ազատ քարտ է հատկացրել Երեւանի պետական օլիմպիական մարզական քոլեջի սովորող Հրայր Մաթեւոսյանին (60կգ): Նա մարզվում է վաստակավոր մարզիչ Յուրի Ներսիսյանի ղեկավարությամբ եւ Հայաստանի ներկայացուցիչներից միակն է, ով Բաքվում վերջերս անցկացված աշխարհի երիտասարդական առաջնությունում տոնեց երկու հաղթանակ:**

**Այսպիսով, Հայաստանի 9 մարզիկներ ունեն Սինգապուրի խաղերի մասնակցի ուղեգիր:**

# Մասնագիտական դասընթացներ մարզիչների համար

**Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի լրատվության պատասխանատու Նաթելա Հովասափյանից, ՄՕԿ-ի հովանու ներքո, ՀԱՕԿ-ի նախաձեռնությամբ Երեւանում եւ Վանաձորում միաժամանակ անցկացվեցին սեղանի թենիսի եւ հանդբոլի մարզչական-տեխնիկական դասընթացներ:**



**Մայրաքաղաքի «Սպարտակ» մարզահամալիրում կայացած կուրսերին մասնակցեցին սեղանի թենիսի 24, իսկ Վանաձորում՝ հանդբոլի 21 մարզիչ- մանկավարժներ Հայաստանից եւ ԼՂՀ-ից:**

**Տեսագործնական պարապմունքները ղեկավարեցին Եվրոպայի սեղանի թենիսի ֆեդերացիայի մարզչական խորհրդի պատասխանատու Պոլոնա Սեհովի Սոսին (Սլովենիա) եւ ՄՕԿ-ի տեխնիկական կուրսերի պատասխանատու, հանդբոլի անվանի մասնագետ Հասան Համուդան (Եգիպտոս): Նրանք ունկնդիրներին հանձնեցին ՄՕԿ-ի հավաստագրեր:**

**Ծրագրի ղեկավար, ՀԱՕԿ-ի բաժնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու Գաբրիել Ղազարյանն ասաց, որ վերջին տասնամյակներում հասկանալի պատճառներով մեր մասնագետները հազվադեպ են մեկնում արտագնա մրցումների, անտեղյակ են մնում մարզաձեւի նորություններին: Մինչդեռ մեծ առաջընթաց է տեղի ունեցել սպորտում, ամենուրեք բարձրացել են մարզիչների մասնագիտական որակները: Ցավոք, դա չի վերաբերում մերոնց: Պատահական չէ, որ դասընթացի մասնակիցները չափազանց գոհ մնացին բանախոսներից: Ի դեպ, սեղանի թենիսի մարզիչների համար սա առաջին կարգի միջոցառում էր եւ այն ավելի շատ վերաբերում էր սկսնակ մարզիկների հետ տարվող աշխատանքներին: Նպատակ կա այս տարի, երկրորդ կիսամյակում մեր մարզիչների համար կազմակերպել ավելի բարձր կարգի դասընթացներ:**

**Հանդբոլի եգիպտացի մասնագետն իր հիացմունքն արտահայտեց մեզանում առկա մասնագիտական հարուստ գրականության համար:**

**Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի եւ միջազգային մարզական կազմակերպությունների միջեւ կապը տարեցտարի ընդլայնվում եւ ամրապնդվում է:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Թողարկվել են հուշադրամներ

## «Րաֆֆու ծննդյան 175-ամյակ»



Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել 10000 դրամ անվանական արժեքով ոսկե հուշադրամ՝ նվիրված հայ նշանավոր գրող, հրապարակախոս եւ հասարակական գործիչ Րաֆֆու (Հակոբ Մելիք-Հակոբյան) ծննդյան 175-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի դաշտում Րաֆֆու «Ջա՛յն տուր, ով ծովակ» ձեռագիր բանաստեղծության ֆոնի վրա պատկերված է փետուրե գրիչ եւ զետեղված է Րաֆֆու ստորագրությունը: Պատկերից ներքեւ երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «10000» եւ «ԴՐԱՄ»: Եզրաշուրթի մոտ շրջագծով հայերեն մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»: Ձախում եզրաշուրթի մոտ նշված է թողարկման տարեթիվը՝ «2010»:

Հուշադրամի դարձերեսի դաշտում պատկերված է կիսաձախ շրջված Րաֆֆու դիմաքանդակը: Եզրաշուրթի մոտ շրջագծով հայերեն մակագրված է «1835 ՐԱՖՖԻ 1888»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 10000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | ոսկի, 9000 |
| Զանգվածը | 8,6 գ |
| Տրամագիծը | 22,0 մմ |
| Որակը | պրուֆ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տպաքանակը | 1000 հատ |

## «Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել 10000 դրամ անվանական արժեքով ոսկե հուշադրամ՝ նվիրված հայ նշանավոր բանաստեղծ եւ հասարակական գործիչ Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի դաշտում պատկերված է աշնանային տեսարան՝ ծառի ճյուղերի եւ անձրեւի տեսքով: Պատկերից ներքեւ երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «10000» եւ «ԴՐԱՄ»: Ամբողջը եզերված է գծավոր շրջանագծով: Եզրաշուրթի մոտ շրջագծով հայերեն մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»: Մակագրության առաջին եւ վերջին բառերը առանձնացված են կետով:

Հուշադրամի դարձերեսի դաշտում պատկերված է կիսաձախ շրջված Վահան Տերյանի դիմանկարը, որը եզերված է գծավոր շր-



ջանագծով: Վերեւում շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով հայերեն եւ անգլերեն մակագրված է «ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ VAHAN TERIAN»: Ներքեւում շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով մակագրված են Վահան Տերյանի ծննդյան եւ մահվան տարեթվերը՝ «1885 1920»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Դիմերեսի ուրվագծի հեղինակն է Էդուարդ Կուրղինյան, իսկ դարձերեսի՝ Հարություն Սամուելյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 10000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | ոսկի, 9000 |
| Զանգվածը | 8,6 գ |
| Տրամագիծը | 22,0 մմ |
| Որակը | պրուֆ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տպաքանակը | 1000 հատ |

## «Լեոյի ծննդյան 150-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել 1000 դրամ անվանական արժեքով արծաթե հուշադրամ՝ նվիրված հայ նշանավոր պատմաբան, հրապարակախոս, գրող եւ գրականագետ Լեոյի (Առաքել Բաբախանյան) ծննդյան 150-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի դաշտում գրքի պատկեր է Լեոյի ձեռագիր ստեղծագործության մի դրվագի եւ Արարատ լեռան ֆոնի վրա: Դաշտի ձախում եզրաշուրթի մոտ նշված է թողարկման տարեթիվը՝ «2010»: Դաշտի կենտրոնում հորիզոնական մեկ տողով հայերեն մակագրված է՝ «Հայ ժողովրդի պատմություն», որից ներքեւ երկու տողով անվանական արժեքի մակագրությունն է համապատասխանաբար՝ «1000» եւ «ԴՐԱՄ»: Աջում եզրաշուրթի մոտ շրջագծով հայերեն մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»:

Հուշադրամի դարձերեսի դաշտում դիմահայաց պատկերված է Լեոյի դիմանկարը, որը եզերված է գծավոր շրջանագծով: Վերեւում շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով հայերեն եւ անգլերեն մակագրված է «ԼԵՈ LEO»: Ներքեւում շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով նշված են Լեոյի ծննդյան եւ մահվան տարեթվերը՝ «1860-1932»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:



**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9250 |
| Զանգվածը | 33,6 գ |
| Տրամագիծը | 40,0 մմ |
| Որակը | պրուֆ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տպաքանակը | 500 հատ |

## «Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել 100 դրամ անվանական արժեքով արծաթե հուշադրամ՝ նվիրված հայ մեծ գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի դաշտում պատկերված է Վարդգես Սու-



րենյանցի «Տիրամայրը մանկան հետ» կտավից մի դրվագ: Պատկերից ձախ եզրաշուրթի մոտ ուղղահայաց հայերեն մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»: Դաշտի ներքեւի ձախում ուղղահայաց նշված է թողարկման տարեթիվը՝ «2010»: Դաշտի ներքեւում եզրաշուրթի մոտ հորիզոնական անվանական արժեքի մակագրությունն է՝ «100 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսի դաշտում Վարդգես Սուրենյանցի լուսանկարի պատկերն է, որտեղ նրա մի ձեռքում վրձին, իսկ մյուսում ներկապնակ է: Դաշտի աջում եզրաշուրթի մոտ ուղղահայաց երկու տողով հայերեն եւ անգլերեն մակագրված են համապատասխանաբար՝ «ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ» եւ «VARDGES SURENIANTS 1860-1921»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Հուշադրամի ձեւավորման համար օգտագործվել են գունավոր ներկեր: Ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 100 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9250 |
| Զանգվածը | 28,28 գ |
| Տրամագիծը | 28,0 x 40,0 մմ |
| Ձեւը | ուղղանկյուն |
| Որակը | լավացված |
| Դրամաշուրթը | հարթ |
| Տպաքանակը | 500 հատ |

## «Լեոնիդ Ենգիբարյանի ծննդյան 75-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել 1000 դրամ անվանական արժեքով արծաթե հուշադրամ՝ նվիրված կրկեսի եւ էստրադայի հայ մեծ արտիստ, ծաղրածու, մնջկատակ Լեոնիդ Ենգիբարյանի ծննդյան 75-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի դաշտում պատկերված են կրկեսի բեմը եւ Լեոնիդ Ենգիբարյանի կողմից կատարվող ամենահայտնի ծիծաղաշարժ կրկեսային համարի գործողության փուլերը: Դաշտի աջում նշված է թողարկման տարեթիվը՝ «2010»: Ամբողջը եզերված է կետավոր շրջանագծով: Շրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով ներքեւում նշված է անվանական արժեքը՝ «1000



ԴՐԱՄ», իսկ վերեւում շրջագծով հայերեն մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»:

Հուշադրամի դարձերեսի դաշտում բացված հովանոցի ֆոնի վրա Լեոնիդ Ենգիբարյանի դիմապատկերն է, որից աջ հորիզոնական երկու տողով մակագրված է համապատասխանաբար՝ «75» եւ «ամյակ»: Դիմապատկերից ձախ ուղղահայաց երկու տողով հայերեն եւ անգլերեն մակագրված են համապատասխանաբար՝ «ԼԵՈՆԻԴ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ» եւ «LEONID YENGIBAROV»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Վարդան Վարդանյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9250 |
| Զանգվածը | 33,6 գ |
| Տրամագիծը | 40,0 մմ |
| Որակը | պրուֆ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տպաքանակը | 500 հատ |

## «Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակ»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել 1000 դրամ անվանական արժեքով արծաթե հուշադրամ՝ նվիրված միջնադարյան պատմագրության խոշորագույն ներկայացուցիչ, հայ պատմագրության հայր՝ Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակին:

Հուշադրամի դիմերեսի դաշտում պատկերված է միջնադարյան մանրանկարչության մոտիվներով կատարված ձեռագիր խորանի առաջին էջը, որի ներքեւի մասում զետեղված է Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունից մի դրվագ: Պատկերից ներքեւ հորիզոնական երկու տողով նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «1000» եւ «ԴՐԱՄ»: Ամբողջը եզերված է գծավոր կիսաշրջանագծով եւ ուղղահայաց գծով առանձնացված է դաշտի աջ հատվածից: Կիսաշրջանագծի եւ եզրաշուրթի միջեւ շրջագծով հայերեն մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ»: Դաշտի առանձնացված աջ հատվածում ոճավորված զարդանախշի պատկեր է, որից աջ եզրաշուրթի մոտ նշված է թողարկման տարեթիվը՝ «2010»:

Հուշադրամի դարձերեսի ձախ հատվածում պատմագրի հավա-



քական կերպարի պատկեր է՝ ըստ Սարգիս Պիծակի ստեղծագործության: Դաշտի աջ հատվածում պատկերված է խորան եւ Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունից մի դրվագ: Ներքեւում հորիզոնական հայերեն մակագրված է «1600 ԱՄՅԱԿ»: Ներքեւում եզրաշուրթով եւ կիսաշրջանագծով առանձնացված դաշտում շրջագծով հայերեն եւ անգլերեն մակագրված է՝ «ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ MOVSES KHORENATSI»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը հատվել է Նիդերլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը.**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9250 |
| Զանգվածը | 33,6 գ |
| Տրամագիծը | 40,0 մմ |
| Որակը | պրուֆ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տպաքանակը | 500 հատ |

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 17.06.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: